№ 67 ՈՒՐԲԱԹ 28 ՄԱՐՏԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ 28 ՄԱՐՏԻ № 67

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարվում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS. Rédaction du journal «MSCHAK».

ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 9 ՌՈՒԲ.

Ապրիլի 1-ից մինչև մայիսի 1-ը—85 կ.։ Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք է վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

1914 թւի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1915 թ. լրիւ վճարած կը լինեն բաժանորդավճար 10 րուբլին, ՁՐԻԱԲԱՐ կը ստանան հետևեալ 2 գրքերից մէկն ու մէկը. «ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1865—1871 Թ.», «ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ» Վրձինի։

ՊԱՐՏՔՈՎ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

ԾԻԾԱՂԻ ԵՐԵԿՈՅ

Ուրբաթ, մարտի 28-ին 1914 թ., կը կայանայ երկրորդ
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ
„Кривое зеркало"
հետևեալ ծրագրով

I

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Երգիծաբան. դասախօսութիւն Հայոց Դրամ. արուեստի մասին Սալ-Մանի և Գ. Երիցեանի։ Կը կարդայ դերասան ԻՍ. ԱԼԻԽԱՆԵԱՆ

Դասախօսութեան ընդմիջումներում կը խաղացվեն հետևեալ պիէսները.

1) ԱՇՈՏ՝ Թագաւոր հայոց, ողբերգութիւն ըստ Կարինեանի
2) ԳԻՇԵՐՎԱՅ ՍԱՐԲԸ ԽԵՐ Է՝ կատակերգութիւն ըստ Սունդուկեանի
3) ՉԱՐ ՈԳԻ՝ դրամա ըստ Շիրվանզադէի
4) ՈՒԽՏՎԱԾՆԵՐ՝ սիմվօլական պիէս ըստ Ահարոնեանի
5) ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ՝ դրամա 5 արար. ըստ Շանթի
6) ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ՝ ըստ Շանթի

II

ՕՐՎԱՅ ՉԱՐԻՔԸ ու ԲԱՐԻՔԸ

1) ՖՈՒՏՈՒՐԻԶՄ՝ մեկ հայ ֆուտուրիստի դասախօսութիւնը, պատկերազարդված դեմոնստրացիաներով՝ բառահիւս, ձայնագոռ, տառաշարժ և գունագիր։
2) ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ՝ կամ մոդական լապտերի չարաճճիութիւնը։

III

ԿԵՆԴԱՆԻ ՍԻՆԵՄԱՏՕԳՐԱՖ

20,000 վերստ Եւրոպայում, կամ «Աշխարհէ աշխարհ», ճանապարհորդութիւն՝ Գաբրիէլ Լամինեանի։ Ցոյց ծիծաղաշարժ պատկեր 12,060 մէտր երկարութեամբ, կատարվում է Մակս Լինդէրի անմիջական հսկողութեան տակ։

IV

Ընդմիջումներին կը ստացվեն ՀԵՌԱԳԻՐՆԵՐ սեփական գործակալներից և կը հրատարակվի «ՆԱՂԴԵՆԻ» միօրեայ երգիծաբանական լրագիրը։

Տեղերի գները էժանացված են ◆ Սկիզբը երեկոյեան ժամը $8^{1}/_{2}$-ին
(ա. օ.) 283. 2—2

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՅՍ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

26 մարտի

ՄՈՍԿՎԱ.—Առաւօտը ժամը 10 ու 30 րոպէին դէպի հարաւ անցան Նորին Մեծութիւնները Օգոստափառ Զաւակների հետ։ Գնացքի կանգնած ժամանակ Կայսրը ընդունեց քաղաքապետին, որ ներկայացրեց հաւատարմահպատակ յուշագիր։ Գահաժառանգ Արքայազնը և Օգոստափառ Դուստրները դուրս ելան վագոնից և զբօսնում էին Արքայական պավիլիօնում.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Այրվեց Գոֆմանի կաշուգործարանը։ Վնասները խոշոր են։

Պուտիլովեան և միացած ֆաբրիկաներում աշխատանքները վերսկսվեցին։

Բեռլին մեկնեցին ռումինական բարձր հիւրերը։

Սենատն անհետևանք թողեց Բրալուլ-Բրուշկովսկիի վճռաբէկ բողոքագիրը, որին Կիեվի դատաստանական պալատը դատապարտել է մի տարով բանտի նրա համար, որ Կիեվի ցուցահանդէսում ազգային օրհներգի նուագածութեան ժամանակ ոտքի չէր ելել։

Ժող. կրթութեան մասնաժողովը հաւանութիւն տուեց Եկատերինբուրգում հանքային ինստիտուտ հիմնելու օրինագծին և մերժեց Սամարայում պոլիտեխնիկական ինստիտուտ բանալու օրինագծի յօդուածային ընթերցմանը դիմելու առաջարկը։

Բիւջէտային մասնաժողովում ֆինանսների մինիստրութեան կառավարիչը առարկեց միջի այլոց ժողովրդական ժուժկալութեան հոգաբարձութիւնների պահպանութեան համար յատկացրված գումարները միլիոնով կրճատելու դէմ, մատնանշելով, որ Բարձրագոյն ռեսկրիպտից յետոյ արբեցողութեան դէմ կռիւը կը տանվի նոր միջոցներով։ Մասնաժողովի մի մասը համաձայնեց մինիստրութեան կառավարչի հետ, միւս մասը գտնում էր, որ հոգաբարձութիւնների գոյութիւն ունեցող կազմակերպութիւնը իր նպատակին չէ հասնում, ուստի և, որքան էլ համակրելի է արբեցողութեան դէմ կռիւը, չի կարելի դրամներ յատկացնել ոչ-կատարեալ ձեռնարկութիւնների համար։ Գումարների կրճատումը թողնվեց։

Արտասահման մեկնեց զինուորական մինիստրը։

ՌԻԳԱ.—Ֆաբրիկաներում և գործարաններում սկսվեցին աշխատանքները, որոնք կանգ էին առել մարտի 24-ից։ Նահանգապետը վարչական կարգով 2 շաբաթից սկսած մինչև 3 ամսով կալանաւորման ենթարկեց 16 բանւորի փողոցային ցոյցերին մասնակցելու, թռուցիկներ տարածելու և աշխատանքները դադարեցնելու կոչ անելու համար։

ԼԻԲԱՎԱ.—Կալանաւորվեցին երեք անյայտ մարդ, որոնք աշխատում էին տանել տեղս եկած գնացքից մի արկղ՝ մայիսեան թռուցիկներով լի։

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների պալատ։ Մորլէյը հարցրեց—մտադիր է, արդեօք, պարսից կառավարութիւնը տարածել շվեդական ժանդարմերիան Հիւսիսային Պարսկաստանի վրա և նպաստա՞ւոր կը վերաբերէ դրան բրիտանական կառավարութիւնը։ Օկլէնդը պատասխանեց, որ այդ հարցը քննում են պարսից, բրիտանական և ռուսական կառավարութիւնները։

Սուֆրաժիստուհի Րիչարդսօնը, որ փչացրել էր Վիլասկէզի պատկերը, արձակվեց բանտից մի քանի շաբաթ յօժարակամ սովադուլ անելուց յետոյ։

Րէյտէրի մի տեղեկութիւնների համաձայն, բրիտանական կառավարութիւնը յատուկ գործակալներ է ուղարկում Սիբիր և Չինաստան՝ ուսումնասիրելու համար առևտրական յարաբերութիւններ հաստատելու հարցը։ Գործակալը Սիբիր ուղևորվելու է այժմ և եթ։

Րէյտէրի տեղեկութիւններից երևում է, որ յունաց նոտային Ալբանիայի և Եգէյեան կղզիների վերաբերութեամբ պատասխանի նախագիծը կազմել են երրեակ համաձայնութեան պետութիւնները։ Հիմք կայ յուսալու, որ բոլոր մեծ պետութիւնները համաձայնութեան կը յանգեն նախագծված ձեռնարկութիւնների առիթով, որոնք հաւանութիւն կը գտնեն նաև յոյն կառավարութիւնից։

Համայնքների պալատի նիստերը յետաձգվեցին մինչև ապրիլի 1-ը։

Ասկվիտը նորից ընտրվեց համայնքների պալատի անդամ Իստաֆայֆում։

ԿԱՀԻՐԷ.—Կ. Պօլսում ստացված այն տեղեկութիւնը՝ թէ գնդապետ Ազիզ-բէյը դատապարտված է մահվան պատժի, մեծ յուզմունք յարուցեց, մանաւանդ շնորհիւ նրա, որ զինուորական դատարանը խառնել էր Դէգիբի անունը Ազիզի հարցաքննութեան մէջ։ Կարծում են, որ Ազիզ-բէյի դատապարտութիւնից յետոյ կը խզվի եգիպտական ժողովրդի դարաւոր կապը Թիւրքիայի հետ։

ԲԵՐԼԻՆ.—Ցաբէրնի յայտնի դէպքերի առիթով հրատարակվեց պրուսական զինուորական մինիստրութեան մշակած և դաշնակից կառավարութիւններից ու Էլզաս Լոտարինգիայի փոխարքայից հաւանութիւն գտած հրահանգը այն մասին՝ թէ երբ են զօրքերը զէնք գործադրելու ներքին անկարգութիւնները ճնշելու համար։ Հրահանգի համաձայն, զէնք կարող է գործադրվել սոսկ նրանից յետոյ, երբ քաղաքացիական իշխանութիւնների տնօրէնութեան տակ եղած բոլոր միջոցները սպառված կը լինեն։

ԲՈՒԴԱՊԵՇՏ.—Անկուսակցական «Ազէստը» վկայում է, որ մի քանի ընդդիմադիր պատգամաւոր, յիրաւի, ուղեկցելու են կոմս Կորոլիին Պետերբուրգ ուղևորվելիս։ Լրագիրը յարակցում են, որ օպպօզիցիայի անդամները վճռել են լուծել երրեակ դաշնակցութեան դէմ բողոքներ կազմակերպելու հարցը։

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ.—Պուանկարէն այցելելու է Կոպէնհագէն Ռուսաստանից վերադառնալիս օգոստոսի սկզբին։

ՎԻԵՆՆԱ.—Հերքվում է Պարիզի բորսայում տարածված լուրերը Ֆրանց-Յովսէփ կայսրի հիւանդութեան մասին։ Կայսրը բոլորովին առողջ է։

ՀՌՈՄ.—Ազգային երկաթուղային ֆեդերացիայի խորհուրդը վճռեց հարցնել ֆեդերացիայի կազմի մէջ մտնող բոլոր կազմակերպութիւններին՝ թէ ինչպէս պէտք է վարվել կառավարութեան վճռումներից յետոյ։

ՉԻԿԱԳՕ.—Այսօր համայնական ընտրութիւններին բոլոր կանայք, որոնք գրել էին իրանց թեկնածութիւնը քաղաքային պաշտօնների համար, ձայների ճնշող մեծամասնութեամբ սևացան։ Շնորհիւ կանանց ձայների, Չիկագօյի բոլոր աւելի քան 1000 խմիչքների վաճառման հաստատութիւնները փակվեցին։

ՑԵՈՒՏԱ.—Մօնտէգէնրո շրջանում տեղի ունեցաւ կատաղի կռիւ։ Սպանացիք կորցրին 41 սպանված, բազմաթիւ վիրաւորներ։

ՊՐԱԳԱ.—Վախճանվեց չեխ գրող Արբէսը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՉԱՓԱԶԱՆՑ ՕԳՏԱԿԱՐ ՔԻՒՐԴԵՐԸ

Հեռագիրը հաղորդում է քիւրդերի մէջ սկսված ինչ-որ հանելուկային շարժման մասին։ Լուրերի համաձայն, 2000 քիւրդ շրջապատել են Բիթլիսը, ուր պահվում էին աննշան թւով զինուորներ ու ժանդարմերիա թնդանօթներով ու գնդակացիրներով։ Տեղի է ունեցել կռիւ, որից յետոյ օսմանեան կառավարական զօրքերը յետ են նահանջել, կորցնելով թնդանօթներն ու գնդակացիրները։

Սովորաբար օսմ. հեռ. գործակալութիւնը շատ ժլատ է այնպիսի տեղեկութիւնների նկատմամբ, որոնք կարող են այսպէս թէ այնպէս հարուած հասցնել թիւրք կառավարութեան պրեստիժին. այս անգամ նա յայտնի չէ ինչու փոխեց արմատացած սովորութիւնը. Թնդանօթները խլելու մասին նա տեղեկացնում է ասես յաղթանակի մասին։ Բայց այդ դեռ բոլորը չէ։ Օսմանեան հեռ. գործակալութեանը յայտնի են նաև քիւրդերի ապստամբութեան պատճառները։ Իսկապէս լեռներից իջել են թափառական ցեղերը ու փախուստի դարձրել օսմանեան զօրքերին։ Ի՞նչ թափառական ցեղեր։ Ո՞րտեղից։ Ինչո՞ւ։ Հապա թէ այսօր հնարաւոր լինէր ասել՝ այստեղ արդէն հարցուփորձի տեղը չէ, երբ տեղի է ունեցել այդպիսի պարտութիւն... բայց ո՛չ. օսմ. հեռ. գործակալութիւնը ուղղակի սկզբից պատրաստված գրութեամբ տեղեկացնում է, որ շարժման գլուխ կանգնած է շէյխ մօլլա Սելիմը։ «Նրա հետ միասին գործում է շէյխ Շէհաբէդդինը»։ Այդ երկու պարոնները կռիւ են մղում ոչ այնքան հայերի դէմ, որքան թիւրք կառավարութեան դէմ։ Քիւրդերի շարժումը կրում է «րէակցիոն բնաւորութիւն». լուրեր են պտտվում, թէ այդ քիւրդերին դրդել է ռուսաց կառավարութիւնը։

Իւրաքանչիւր ժամ դառնում է անտանելի։ Վերջերս մի ֆրանսիացի ժուռնալիստ, քննելով այն թիւրք-ռուսական համաձայնութեան նշանակութիւնը, որ ստորագրվեց մէկ և կէս ամիս առաջ և որի մէջ շատ լաւատեսներ աշխատեցին տեսնել նոր դարագլխի սկիզբը Հայաստանի համար, գրում էր բառացի կերպով. «Աւելի պարզ, քան երբևիցէ, ես տեսնում եմ մօտալուտ այն վտանգաւոր ժամը, երբ թիւրքերի ձգձգել ու ծանօթութիւնները արտասահմանեան մի դեսպանի խրախուսանքների հետ, Հայաստանը ականատես կը դարձնէ 1896 և 1899 թւականների սարսափներին։ Մեզ բարենորոգում են խոստանում. կը ստացվին,—յիշեցէք իմ խօսքը,—անմեղ հայ ազգաբնակութեան նոր գնդակահարութիւններ»։ Վ. Բէրարի մարգարէութիւնը կատարվում է աւելի շուտ, քան ըստ երևոյթին նա սպասում էր։

Սկսում են զարգանալ այնպիսի դէպքեր, որոնք անհաւանական միակերպութեամբ վերահաստատում են օսմանեան սովորական կաղապարը։ Բարենորոգումնե՞ր. խնդրեմ, մենք ամեն ինչի համաձայն ենք։ Ստորագրե՞լ համաձայնութիւն. համեցէք։ Կատարե՞լ. խօսոյն կը սկսենք։ Դժբաղդութիւնը միայն նրանումն է, որ քիւրդերը համաձայն չեն։ Բարենորոգումները հակասում են իրանց հայեացքներին։ Իրաւահաւասարութեան ձգտել՝ նշանակում է ստեղծել տեղական վայրենի լեռնականների մէջ ձգտում՝ զէնքով ոչնչացնելու «իրաւահաւասար» քրիստոնեաներին։

Ամեն մէկը, ով գոնէ որոշ չափով զբաղվել է արևելեան հարցի պատմութեամբ, բթանալու չափ, անգամ մինչև գլխացաւ կարդացել է այդ օրինակները տեղական վայրենիների վերաբերմամբ և՛ 1833 թ., և՛ 1854 թ., և՛ 1876 թ., և՛ 1903 թ.։ Միայն բոլորովին անկիրթ մարդկանց ու միմիայն վերին աստիճանի միամիտ դիպլօմատներին կարելի է հաւատացնել, թէ քիւրդերը սեփական նախաձեռնութեամբ յանկարծ դարձան «րէակցիօներներ»։

Հետաքրքրական է իմանալ, թէ ինչով է վերջանալու երիտասարդ թիւրք ֆանատիկոսների այս նոր թակարդը։ («Н. В.»)

ՀԱՅԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՒ ՄԵԾ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

(Պ. Ն. Միլիւկովի դասախօսութիւնը Մօսկվայում մարտի 16-ին)

Բալկանեան պատերազմից յետոյ Եւրոպայի համար առաջնակարգ նշանակութիւն ստացաւ հայկական հարցը։ Մինչ դիպլօմատիան աշխատում էր իրագործել տասնեակ տարիներ առաջ իր տուած խոստումները հայ բազմաչարչար ազգին, եւրոպական հասարակութեան մէջ առաջ եկաւ ուժեղ ցանկութիւն՝ ծանօթանալ հայ ազգի անցեալի և նրա կուլտուրայի զանազան կողմերի հետ։ Այս նպատակով կազմակերպվեցին եւրոպական մայրաքաղաքներից շատերում հայկական կոմիտէներ, որոնց պէտք է նպաստեն նաև հայ ազգի քաղաքական շահերի պաշտպանութեանը իրանց կառավարութիւնների միջոցով։ Այդպիսի կոմիտէներ կազմվել են նոյնպէս Պետերբուրգում և Մօսկվայում մասնակցութեամբ յայտնի գիտնականների, քաղաքական և հասարակական գործիչների և առևտրի ու արդիւնաբերութեան ներկայացուցիչների։ Մօսկվայի կոմիտէն, ծանօթացնելու համար ռուս հասարակութեանը հայկական հարցի հետ, ամսիս 16-ին կազմակերպել էր դասախօսութիւն՝ «Հայերը Թիւրքիայում և մեծ պետութիւնների քաղաքականութիւնը» թէմայով։ Դասախօս Պ. Ն. Միլիւկովի ասածները ներկայացնում են մեծ հետաքրքրութիւն ոչ միայն այն պատճառով, որ նա յայտնի է որպէս իրաւաբանական և պատմական դիսցիպլինաներին լաւ տեղեակ գիտնական, այլ և շնորհիւ այն հանգամանքի, որ նա, որպէս քաղաքական յայտնի գործիչ, բալկանեան ճգնաժամի ընթացքում յաճախ հրաւիրվում էր արտաքին գործերի մինիստրի մօտ «մի բաժակ թէյի» և մօտ մասնակցութիւն է ունեցել հայկական հարցը վճռելու մէջ։

Դասախօսը սկսեց իր զեկուցումը հարցով՝ ինչպիսի հանգամանքներ դարձրին հայկական հարցը երկրորդականից առաջնակարգ և հրատապ, ինչպէս բացատրել այն մեծ հետաքրքրութիւնը, որը տածում է այժմ ռուս հասարակութիւնը դէպի հայ ժողովրդի բաղդը։ Դրա պատճառը պէտք է որոնել քաղաքական կոնիւնկտուրայի մէջ եղած փոփոխութիւններում։ Եւրոպան մինչև բալկանեան պատերազմը չէր հետաքրքրվում հայկական հարցով, որովհետև նրա ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացած էր Մակեդոնիայի վրա. մակեդոնական հարցն էր զբաղեցնում Եւրոպային, և վերջինս ամեն ջանք գործ էր դնում պահպանել խաղաղութիւնը այդ երկրում՝ խափանելու համար եւրոպական պատերազմը։ Ինչպէս Եւրոպական այնպէս էլ Ասիական Թիւրքիայի բաժանումը Եւրոպան համարում էր միայն հեռաւոր ապագայի խնդիր։

Վերջին պատերազմի նախօրեակին տեղի ունեցած անցքերին Եւրոպան վերաբերվեց բաւական հանգիստ, որովհետև նա հաւատացած էր, որ նոր սահմանադրական ռեժիմով ապրող, գերմանացի ինստրուկտորների շնորհիւ վերակազմված զօրաբանակ ունեցող Թիւրքիան անկասկած կը յաղթէ իր հակառակորդներին՝ բալկանեան դաշնակիցներին։ Հետևապէս, նրա կարծիքով, անհրաժեշտ կը լինի ջանք գործ դնել փրկելու դաշնակիցներին յաղթական Թիւրքիայից։

Բայց դիպլօմատիան սխալվեց. նա չէր նկատել այն պատճառները, որոնք արդէն փտեցրել էին թիւրք պետութեան հիմքերը և որոնք թոյլ տուին ոչնչացնել մի ժամանակ ահարկու կայսրութիւնը։ Բոլոր այն պլանները, որոնք կազմված էին Թիւրքիային միայն հեռաւոր ապագայում բաժանելու ենթադրութեան վրա, բալկանեան պատերազմից յետոյ քանդվեցին։ Եւրոպական Թիւրքիայի բաժանումից յետոյ հերթական դարձաւ նաև Ասիականինը. Նոր ուժով հանդէս եկան արաբական, սիրիական և հայկական հարցերը։ Քանի որ չը կար շահերի ուժեղ ընդհարում, այս հարցերը յետաձգվում էին, և պետութիւնները աշխատում էին խաղաղ կերպով մտնել Թիւրքիա և տնտեսական աւելի ու աւելի մեծ նուաճումներ անել «հիւանդ մարդու» որոշ մասերը ապագայում ձեռք ձգելու համար։ Սակայն այս պլանն էլ քանդվեց. բալկանեան պատերազմից յետոյ արագ կերպով առաջ գնաց ազդեցութեան շրջանների բաժանելու քաղաքականութիւնը։ Որպէս սրա հետևանք՝ նորից հրապարակ եկաւ հայկական հարցը. նա դարձաւ աւելի հրատապ, առաջնակարգ, սիրիականի և արաբականի հետ համեմատաբար, շնորհիւ իր հանգոյցային բնաւորութեան։ Ի հարկէ հայկական վիլայէթները կարելի կը լինէր դարձնել ռուսական ազդեցութեան շրջան. սակայն պէտք է ի նկատի ունենալ, որ հայութեան մի աւելի մեծ զանգուած ապրում է Կիլիկիայում, իսկ այս երկիրը ոչ մի դէպքում չէր կարող ռուսական ազդեցութեան տակ անցնել։ Հայկական հարցը ունի կենտրոնական նշանակութիւնը ոչ միայն զուտ աշխարհագրական տեսակէտից, այլ և տնտեսական և կուլտուրական։

Գերմանացի յայտնի ճանապարհորդ պ. Րօրբախը, որը շատ է ճանապարհորդել Արևելքում, իր գրուածքներում մատնանշում է այն մեծ նշանակութեան վրա, որը ունի հայ տարրը Ռուսաստանի համար։ Նրա կարծիքով, վերջինս չարաչար կը սխալվի, եթէ ներքին միութիւն չը հաստատի հայերի հետ, որովհետև նա այդ գնով կը դարձնի թիւրքահայերին իր հնազանդ և ուժեղ քաղաքական գործակալները։ Հայ տարրը կարող է ուժեղացնել ռուսական ազդեցութիւնը և յաղթութիւն տալ նրան Կիլիկիայից մինչև Կասպից ծով և Սև ծովից մինչև Բաղդադ։ Հայերի կուլտուրականութիւնը, նրանց գործունեայ և նախաձեռնող բնաւորութիւնը խոստանում է այդ երկրին ծաղկում, եթէ միայն հին կարգերը փոխվեն նորերով։ Գերմանացի ճանապարհորդը դեռ 1897 թւի հաւատացնում էր, թէ ռուսահայերի մէջ սեպարատիզմ գոյութիւն չունի, որ նրանք աւտօնոմիա էլ չեն ցանկանում. Նրանք միայն կամենում են պահպանել իրանց եկեղեցին, զարգացնել իրանց ազգային ինքնուրոյն կուլտուրան. պէտք է թոյլ տալ հայերին զարգացնել իրանց կուլտուրան. այդ գնով կարելի կը լինի և թիւրքահայերին սերտ կապել Ռուսաստանի հետ։

Ահա թէ ինչ էր ասում անցեալ դարի վերջերին գերմանացի ճանապարհորդը, գերմանացի հայրենասէրը։

Երբ գրվում էին այս խօսքերը, Կովկասում սկսվեց իշխ. Գոլիցինի քաղաքականութիւնը, միայն հակառակ ճանապարհով՝ հայերի ազգային ձգտումների ճնշման ուղիով։ Նրա շնորհիւ Պետերբուրգում սաստիճան ոյժ ստացաւ այն առասպելը, թէ հայերը ցանկանում են ստեղծել հայկական թագաւորութիւն մինչև Դօն։ Կովկաս ուղարկվեց յատուկ մասնաժողով այս հարցի քննութեան համար, որը ապա իր կարծիքը ներկայացրեց բարձր շրջաններին։

Այդ հայատեաց քաղաքականութիւնը տևեց մինչև 1903 թիւը։

Ժամանակը անցնում էր, բայց հայերի վերաբերմամբ դեռ ոչինչ արված չէր. սակայն շուտով տեղի ունեցան մի շարք փոփոխութիւններ, և հայկական հարցը մտաւ իր զարգացման նոր և վերջին փազիսը։

Ինչպէս է հարցի պատմութիւնը։ Վերջին ռուս-թիւրքական պատերազմը վճռելով բազմաթիւ հարցեր՝ բերեց հայերին այն օգուտը, որ Սան-Ստեֆանոյի դաշնագրի համաձայն Թիւրքիան յանձն առաւ անյապաղ անց կացնել Հայաստանում բարենորոգումներ և պաշտպանել հայերին քիւրդերից և չէրքէզներից։ Թիւրքիան տալիս էր Ռուսաստանին ապահովութիւն իրագործել ռեֆորմները, իսկ ռուս զօրքը իր ներկայութեամբ պիտի նպաստէր դրան։

Սակայն Ռուսաստանի հակառակորդները, գերմանացիները և անգլիացիները, շահագրգռված էին չը թողնել այդ գործը միայն Ռուսաստանի ձեռքում. այդ երկու պետութիւնները մի շարք պահանջներից յետոյ փոփոխութիւնների ենթարկեցին այդ յօդուածը։ Բեռլինի վեհաժողովը աւելացրեց նրան նոր կէտ՝ Բ. Դուռը պէտք է պարբերաբար հաղորդի մեծ պետութիւններին այն բարենորոգումների մասին, որ ինքը կիրագործէ Հայաստանում։ Այսպիսով Անգլիան, ռեֆորմներին հսկելու գործը Ռուսաստանից առնելով, յանձնեց բոլոր պետութիւններին և, որպէս պաշտպան թիւրքական շահերի, նա կնքեց Կիպրոսի պայմանագիրը, որով նա խոստացաւ պահպանել Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը։ Բայց Թիւրքիան ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ չը կատարեց իր խոստումները. նա ոչինչ չէր գործադրում և ոչինչ չէր հաղորդում։ Մինչդեռ Անգլիան իր վրա բարոյական պարտականութիւն էր զգում ստեղծել տանելի դրութիւն Հայաստանում, քանի որ հիւպատոսները իրանց զեկուցումների մէջ ցոյց էին տալիս, որ օրէ-ցօր հայերի դրութիւնը վատթարանում է։ Նրանք խորհուրդ էին տալիս իրանց կառավարութեան անմիջապէս իրագործել տալ խոստացված ռեֆորմները ոչ միայն մարդասիրական տեսակէտից, այլ այն պարզ պատճառով, որ Թիւրքիան, չը բարւոքելով հայերի դրութիւնը, հետևութեամբ կը զրկվի իր գաւառներից։ Ահա թէ ինչու Անգլիան աշխատում էր սպառնալիքներով ստեղծել Բ. Դրան կատարել տուած խոստումը. բայց նրանք այնպիսի մեծ նշանակութիւն ունենալ չէին կարող, որովհետև Թիւրքիան լաւ էր նկատում պետութիւնների շահերի հակառակութիւնը, որից և օգտվում էր. միւս կողմից Անգլիային խանգարում էր աշխարհագրական դրութիւնը. նա չէր կարող ոչ մի կերպ Հայաստան զօրք մտցնել, որպիսի հանգամանքը սրամիտ կերպով բնորոշվել էր անգլիական դեսպանի կողմից՝ «ես հօ չեմ կարող Մուշ զրահակիրներ ուղարկել»։ Իր բոլոր սպառնալիքները սպառելուց յետոյ՝ Անգլիան լռեց, նա դադարեց նաև տպել հիւպատոսների հաղորդագրութիւնները, որոնք կազմեցին բազմահատոր «Դեղին» և «Կապոյտ» գրքեր։ 80-ական թուականներից մինչև 1894—5-ը հայկական հարցի վրա կողպէք է դրվում։

Այս տարիների սարսափելի անցքերը նորից յարուցին հայկական հարցը, մանաւանդ որ հիւպատոսները պնդում էին իրանց զեկուցումների մէջ, թէ ջարդերը, կրելով սիստեմատիկական բնաւորութիւն, հետևանք էին կենտրոնական կառավարութեան հրահանգի։ Թւում էր, թէ հարցը այս անգամ արդէն պիտի վճռվի. սակայն պետութիւնների մրցակցութիւնը կրկին խանգարեց դրան։ Այն ժամանակ Անգլիան արգելեց ռեֆորմների իրագործումը, այժմ՝ Ռուսաստանը։ Անգլիան խնդրում է նրանից միջամտել, վերջ դնել հայերի տառապանքներին և ապահովել Եւրոպայի խաղաղութիւնը։ Սակայն Ռուսաստանը մերժեց այդ առաջարկը, որովհետև այդ ժամանակ չը կար այն առողջ քաղաքականութիւնը, որի վրա մատնանշում է գերմանացի ճանապարհորդը. այն ժամանակ Գոլիցինի ռէժիմն էր։

Հայաստանում առաջ եկան յեղափոխական կազմակերպութիւններ, որոնք նպատակ էին դրել ազատագրել իրանց հայրենիքը թիւրքական լծից։ Գոլիցինը հաւատացրեց կառավարութեան, որ այդ յեղափոխական կազմակերպութիւնները սպառնում են նաև Ռուսաստանին. նա հաւատաց Գոլիցինին։ Այս պատճառով Ռուսաստանը չը նպաստեց ռեֆորմների իրագործման. նա պահանջ դրեց նաև, որ հայերին աւտօնօմիա չը տրվի, որովհետև դա հակառակում է իր շահերը։ Այն ժամանակ Անգլիան առաջարկեց նշանակել քրիստոնեայ նահանգապետներ, մտցնել որոշ ռեֆորմներ, իսկ եթէ դա էլ շատ թւայ, համոզել Բ. Դրան նշանակելու նահանգապետներ գոնէ ազնիւ մարդկանց։

Վերջապէս որոշ համաձայնութիւն կայացաւ՝ օգոստ. 5-ին 1895 թ.։ Լորդ Սոլիսբըրիի և Լօբանովի միջև նոյն թւի մայիսին կազմվեց յայտնի յիշատակագիրը։ Ռուսաստանը յայտնեց նաև, որ նա դէմ է ույժ գործադրելու Թիւրքիայի դէմ։ Օգտվելով այս հանգամանքից՝ սուլթանը հրատարակեց ընդհանուր օրէնք վիլայէթների համար, որը շուտով մոռացութեան տրվեց։ Տեսնելով պետութիւնների ինդիֆերէնտ վերաբերմունքը, «արիւնոտ սուլթանը» առանց վախենալու վերսկսեց իր սարսափելի ջարդերը հայկական նահանգներում. տեղական ադմինիստրացիայի ներկայացուցիչները բացարձակ ասում էին՝ «գնացէք այժմ և գանգատվեցէք ձեր օտարազգի հիւպատոսներին»։

Համաձայն հիւպատոսների հաղորդագրութիւններին, ամբողջ երկիրը մեծամեծ վնասների ենթարկվեց, աւերվեցին հարիւրաւոր գիւղեր, սպանվածների թիւը հասաւ հարիւր հազարների, շատերը գաղթում էին կամ ընդունում մահմեդականութիւն։ Ջարդերի մէջ բացարձակ մասնակցութիւն էր ցոյց տալիս նաև զօրքը։ Այս բոլոր հանգամանքները ցոյց էին տալիս, թէ գոյութիւն ունեն ոչ թէ սպանութեան և կողոպուտի առանձին դէպքեր, այլ հայ ազգը բնաջինջ անելու ձգտում, որը առաջ էր տարվում որոշ սիստեմով. և, ինչպէս, յետոյ ապացուցվեց, որ կենտրոնական կառավարութիւնը որոշ դիրեկտիվներ էր ուղարկել նահանգապետներին։ Սուլթանը, կազմակերպելով ջարդեր, ունէր մեծ քաղաքական մոտիվ. ոչնչացնելուց յետոյ հայութիւնը Թիւրքիան կը կարողանար ձեռք մեկնել արտասահմանի մահմեդականներին և միացնել նրանց ապագայում իրան, որովհետև սուլթանը պանիսլամիզմի ամենամեծ ջատագովներից էր։ Գլադստոնը 1895 թ. արտասանած իր ճառերից մէկում պարզ ասաց, որ ջարդերի նպատակն է եղել ոչնչացնել հայ ազգը, և առաջարկեց գործադրել թիւրք կառավարութեան դէմ մի շարք վճռական միջոցներ։ Նրա կարծիքով՝ Հայաստանի դրութիւնը բարելաւելու համար անհրաժեշտ են 3 միջոցներ. 1) որոշ մինիմում, միայն անպայման անհրաժեշտը, 2) չը հաւատալ Թիւրքիային և անպատճառ ռեֆորմները դնել պետութիւնների հսկողութեան տակ, 3) չը վախենալ ստիպողական միջոցներ գործադրելուց, որովհետև այդ ճանապարհով միայն կարելի կը լինի վճռել հարցը։ Ինչպէս յայտնի է, ռուսական դիպլօմատիայի պաշտպանած ծրագիրը համապատասխանում է այս 3 կէտերին։

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ *)

Այսպէս ուրեմն՝ բոլոր վերոյիշեալները մեզ պարզ ապացուցանում են երեք էական հանգամանք. 1) 1887 թւից սկսած մինչև օրս նախկին երեք թեմական առաջնորդների օրով անդադար աշխատանք և գրագրութիւններ են տեղի ունեցել՝ Աստրախանում թեմական դպրոց ունենալու մասին։ 2) Աստրախանի թեմ. դպրոցը թեմի պատգամաւորական ժողովի որոշումով և ներքին գործերի մինիստրի գրութեան համաձայն 1906 թւից բացված է Աստրախան քաղաքում։ 3) Էջմիածնի սինօդի և թէ Աստրախանի հայ հասարակութեան կողմից անընդհատ ջանքեր են եղել թեմակ. դպրոցի կանոնագրութիւնը հաստատելու և հետևեալ դասարանները բացելու մասին։

Բացի բարոյական պաշտպանութիւնից՝ Աստրախանի հայ հասարակութիւնը ոչ պակաս դրամական աջակցութիւն է ցոյց տուել իր թեմակ. դպրոցին։ 1895 թ. դեկտեմբերի 24-ին սրբազան Սեդրակեանի մօտ սկսած դրամական նուէրների ստորագրութիւնը շարունակվելով, աստրախանցի հայը դրամական նուիրաբերութիւն է արել 34,935 րուբլի։ Աստրախանի եկեղեցիներից, գլխաւորապէս ս. Պետրոս Պօղոս և ս. Աստուածածին եկեղեցիներից, թեմական դպրոցի շինութեան համար զանազան ժամանակ վճարել է տալ մօտ 37,000 րուբլի։ Այնուհետև բացման օրից մինչև օրս դպրոցի երկու պատրաստականների պահպանութեան համար Աստրախանը ծախսել է միջին թւով 2,500 րուբլի, ուրեմն այս 8 տարվայ ընթացքում 20,000 րուբլուց աւելի։ Ասել է՝ Աստրախանի հայ հասարակութիւնը իր թեմական դպրոցի հիմնվելու օրից մինչև օրս՝ ընդհանուր առմամբ, դրա վրա ծախսել է 90,000 րուբլուց աւելի գումար, չը հաշուած եկեղեցապատկան այն մեծ հողաբաժինը, որի վրա կառուցված է թեմակ. դպրոցի շէնքը։ Բացի այդ՝ նոյն Արիստակէս սրբազանը 1897 թւին առանձին կարգադրութեամբ թեմ ուղարկեց կօնսիստորիայի անդամ Գէորգ քահ. Մկրտումեանին, թեմի այլևայլ քաղաքներում դրամ հանգանակելու թեմ. դպրոցի օգտին և եկեղեցիներից ժամանակաւոր փոխառութիւն անելու։ Եւ այսպէս՝ թեմում մասնաւոր նուիրաբերութիւններ եղել են 1915 ր., իսկ եկեղեցիներից փոխ է առնված մօտ 20,000 ր., որպիսի փոխառութիւնը հետզհետէ վերադարձվում է Աստրախանում գտնվող թեմիս մոմավաճառութեան պահեստի զուտ արդիւնքներից և ներկայումս շատ քիչ գումար է մնացել վերադարձնելու։ Պէտք է ասել, որ մոմավաճառութեան պահեստը, որը հիմնված է որպէս թեմական դպրոցի պահպանութեան աղբիւր, ներկայումս ունի 12,000 ր. դրամագլուխ, չը հաշւելով թեմի եկեղեցիներից ստանալիք 20,000 ր. պարտիքը։ Նոյնպէս՝ թեմական դպրոցի անունով նախկին տարիներից ամբարված կայ 18,000 ր. անձեռնմխելի գումար։

Այսպիսով ուրեմն պարզ է, որ թեմական դպրոցի կառուցման, բացման, պահպանելու և նրա օգտին զանազան դրամագլուխներ կազմելու ամբողջ ծանրութիւնը ընկել է Աստրախանի հայ հասարակութեան վրա, և չը նայած որ կանոնադրութեան հաստատման հարցը երկար տարիներ ձգձգվել է և յաջորդ դասարանների բացման իրաւունքը չը ստացվելով, գոյութիւն ունեցող դպրոցի առաջին երկու պատրաստականները մնացել են կիսամահ վիճակում, այնուամենայնիւ, այդ տարտամ կացութեան մէջ էլ Աստրախանի հայ հասարակութիւնը անուշադիր չէ թողել թեմ. դպրոցը, այլ սիրած ու փայփայած զաւակի նման գգվել է նրան և ոչ մի զոհողութիւն չի խնայել պահպանելու նրա գոյութիւնը մինչև յոյսերի իրագործման րոպէն։ Միւս կողմից՝ զգալով որ պարտականութիւն ունի ամբողջ թեմի առջև՝ պահպանելու իրան յանձնված դպրոցը, այսօր մեր հայ հասարակութիւնը պարզ երեսով կանգնած է թեմի ժողովրդի առաջ, որովհետև սրբութեամբ կատարել է իր պարտքը։ Իսկ թէ ինչու չի հաստատվել կանոնագրութիւնը, ինչու չեն բացվել յաջորդ դասարանները, այդ խնդիրը հասարակութեան ոյժից վեր է։

Որ մեր հայ հասարակութիւնը հետաքրքրվել է միշտ այդ հարցով, իբրև նորագոյն փաստ բերում ենք այն հանգամանքը, որ մի ամիս առաջ ծխական ժողովում առաջ եկաւ, այն է՝ թեմակ. դպրոցի նախահաշիւը հաստատելիս՝ ծխականներն որոշեցին արձանագրութեան մէջ մտցնել հետևեալը. թեմակ. իշխանութեան միջոցով խնդրել Վեհափառ Հայրապետի միջնորդութիւնը՝ դպրոցի կանոնագրութեան հաստատման և հետևեալ դասարանների բացման մասին։ Եւ երբ անկեղծ սպասում էինք խնդրի ողջ լուծման, այսօր, կրկնում ենք, զարմացմամբ լսում ենք, որ նոր հարց է դրված, ո՞ւր բացել թեմական դպրոցը։ Եւ տեղեկանում ենք՝ մինչև անգամ մեր թեմակալ առաջնորդ տէր Մխիթար եպիսկոպոսը դեռ անցեալ նոյեմբեր ամսին առանձին գրութեամբ յանուն Էջմիածնի սինօդի իր կարծիքն է յայտնել թէ՝ թեմակ. դպրոցի համար յարմարագոյն վայրը Արմաւիր աւանն է. այն առարկութեամբ, որ Աստրախանը աշակերտութեան ցանկալի թիւ չի տայ։

Այդ պատճառաբանութեան դիմաց, սակայն, առաջ ենք բերում այն խօսուն փաստը, ու 1906 թւին, երբ դպրոցի առաջին երկու նախակրթարանները բացվեցին, հենց սկզբում դպրոցն ունեցաւ 75 աշակերտ, Ա. պատրաստականում 40 աշ., Բ.-դում՝ 35. զուտ Աստրախանում բնակվողներ։ Սրանից անկախ՝ այսօր Վոլգայի վրա գտնվող հայ գաղութների թիւը աւելացել է՝ Ցարիցին, Սարատով և այլ քաղաքները, որոնք վաճառականական շահերով և երկաթուղային հաղորդակցութեամբ կապված են Աստրախանի հետ, հետևապէս կը տան և աշակերտների ցանկալի թիւ։ Մեզ ասում են, թէ դպրոցի բացվելու օրից Աստրախանի պայմանները փոխվել են։ Պայմաններն ոչ միայն չեն փոխվել ի վնաս Աստրախանի, այլ և ներկայումս առաջադիմել են և բարեփոխվել յօգուտ սրա։ Աստրախանը երկաթուղով միացել է Սարատովի հետ, ուրեմն և կենտրոնական Ռուսաստանի և նրա հիւսիսային նահանգների հետ. և եթէ ի նկատի ունենանք Աստրախանի երկաթուղու կապակցութիւնը Օրենբուրգի երկաթուղու հետ, մենք կը տեսնենք, որ Աստրախանը հեշտ կերպով միացվում է Թուրքեստանի և Անդրկասպեան երկրի հետ. գաղթավայրեր, ուր 1895 թւին աննշան հայութիւն կար, այն ինչ ներկայումս Աստրախանի թեմի ամենահայաշատ վայրերն են։ Աւելացնենք և այն, որ մօտ ապագայում Աստրախանը միանում է Աստրախան-Դիվնօյէ և Աստրախան-Տօրգովօյէ երկաթուղագծերով Հիւսիսային Կովկասի հետ, որոնցով մեր թեմի հայաշատ վայրերը, օրինակ՝ Արմաւիր, Եկատերինօդար, Պեատիգորսկ և այլն Աստրախանի հետ կապվում են միայն 10-ժամեայ հաղորդակցութեամբ։ Նոյն կերպով միանում են նաև Չեռնոմորեան նահանգի հայ գաղութները Աստրախանի հետ, որոնք 1895 թւին մեր թեմի մասը չէին կազմում։

Երբ մի կողմից նկատի ենք առնում այդ ամենը և միւս կողմից՝ տեսնում ենք մի առաջարկված վայր (Արմաւիրը), որից 7—8 ժամվայ հեռաւորութեամբ գտնվում է մի այլ թեմ. դպրոց Նոր-Նախիջևանում, ակամայից հարց է ծագում, թէ ինչո՞ւ երկու թեմ. դպրոց դնել իրար հարևան, երբ այնուհետև ակներև է Աստրախանի լայնածաւալ թեմի զանազան շրջանների հեռու մնալը թեմ. դպրոցից։

Բացի դրանից, պէտք է ի նկատի ունենալ և այն միջավայրը, որտեղ պէտք է հիմնվի ամբողջ թեմի կենտրոնական դպրոցը։ Այդ պէտք է լինի որոշ մտաւոր կենտրոն։ Աշակերտին զարգացնողն ու առաջադիմողը միայն դպրոցը չէ, այլև շրջապատող կեանքը։ Աստրախանը իբրև առևտրական մեծ կենտրոն, որի բնակչութիւնը 200,000-ից աւելի է, որը ունի 5 օրիորդական գիմնազիա, երկու արական գիմնազիա, երկու ռէալական դպրոց, առևտրական դպրոց, առևտրական ինստիտուտ, ուսուցչական սեմինարիա (բացվում է նաև ուսուցչական ինստիտուտ), ժողովրդական համալսարան, անգին թւով ստորին դպրոցներ, գիտական (իրաւաբանական, բժշկական, մանկավարժական, լեզուագիտական, գրականական) և կուլտուրական ընկերութիւններ, անշուշտ իրաւունք ունի համարվելու մտաւոր կենտրոն, ի հարկէ, համեմատելով թեմի այլ հայաշատ վայրերի հետ։ Մեր հայ հասարակութիւնը ևս ունի Աղաբաբեան դպրոց, Գրական-Գեղարուեստական Ընկերութիւն, կարուձևի դպրոց, Աղքատաց Հոգաբարձութիւն, Կանանց Բարեգործական Ընկերութիւն, որբանոց և այլն։

Դպրոցի հարցին եթէ մօտենանք ապահովութեան տեսակէտից, նոյն իսկ Աստրախանին հակառակորդները պիտի ընդունեն, որ դա ամբողջ թեմի միակ քաղաքն է, որ կարող է ապահովել դպրոցի գոյութիւնը։ Աղքատաց Հոգաբարձութեան այն անգին գումարները, որոնք անշարժ կալուածների հետ 650,000 ր. գումարի են հասնում, այն առատ բարեգործութիւնը, որ անում է Աստրախանի հայը, այն պատրաստակամութիւնը՝ պահպանելու իր հիմնարկութիւնները՝ գալիս են համոզելու, որ Աստրախանի հայը ոչ միայն առատ նուիրաբերութիւն է արել անցեալում, նոյնը շարունակում է և ներկայումս. օրինակ, հանգ. Մուրադխանեանի 110,000 րուբլու կտակը ուսումնական գործի համար և նրա հիմնած երկու թոշակը Աստրախանի թեմ. դպրոցում, հանգ. Ս. Թամազեանի 167,000 ր. կտակը բարեգործական նպատակով և այն նոր գրված կտակները, որոնցով նուիրաբերութիւններ են անվում Աստրախանի թեմ. դպրոցին, այդ ամենը ապացուցանում են Աստրախանի կարողութիւնը թեմ. դպրոցը ապահովելու հարցում։

Այսպէս՝ այդ ամենը պարզելուց յետոյ, Աստրախանի հայ հասարակութիւնը ամենախոնարհաբար դիմումով առ Նորին Վեհափառութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոս տէր Գէորգ Ե-ը՝ որդիական ակնածութեամբ այդ ամենի վրա հրաւիրում է Նորին Սրբութեան ուշադրութիւնը և խնդրում է անուշադիր չը թողնել այն անգին բարոյական և նիւթական զոհողութիւնները, որոնք քաջ ծանօթ են Նորին Սրբութեանը իբրև Աստրախանի թեմի նախկին առաջնորդի և այդ խնդրում գործին մօտ կանգնած անձնաւորութեան։ Ես առաւել խնդրում եմ, պաշտպանելով Աստրախանի հայ գաղութի իրաւունքները, առաջ տանել Աստրախանի թեմ. դպրոցի կանոնագրութեան հաստատութեան հարցը պատշաճաւոր իշխանութեան առաջ և օր առաջ ձեռք բերել Աստրախանի թեմ. դպրոցի հետևեալ դասարանների բացման իրաւունքը։

Ստորագրված է ի դիմաց զեկուցումը կազմող յանձնաժողովի՝

Պատգամաւոր Ռոմ. Աստուածատրեան

ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Օդեսսայի խուզարկու ոստիկանութիւնը այս օրերս ձերբակալեց աչքի ընկնող յանցագործ Օ. Պ. Տէր-Պետրոսեանին, որը պարագլուխն է եղել մի խումբ աֆերիստների, որոնք պարբերաբար պօստատներից կողոպտել են 100,000 րուբլուց աւելի։ Ինչպէս յայտնի է, իր ժամանակին Օդեսսայում կալանաւորվեցին 22 հոգի այդ կողոպուտի համար, որոնց թւում կային և պօստատան մի քանի պաշտօնեաներ, նոյնպէս և՝ արկածախնդիր Միշիցին։ Կալանաւորները բանտ դրվեցին. նրանցից մի քանիսը միայն ազատվեցին գրաւականով։ Պօստային պանամայի գործը այժմ գտնվում է շրջանային դատարանում և մեծ ծաւալ ստանալով հասել է 23 հատորի։ Հաստատվել է, որ այն դրամաշորթների, որոնք կողոպտել են պօստը, պարագլուխը եղել է Օ. Պ. Տէր-Պետրոսեան, որին աջողվել է շատ հեռանալ Օդեսսայից։ Նա թագնվել է Լազարիս, Լազարեվ, Գինդ և այլ ազգանուններով, և որպէսզի բոլորովին չը ճանաչվի, գրիմով է ման եկել։ Այս օրերս խուզարկու բաժանմունքը տեղեկութիւն է ստացել, որ Տէր-Պետրոսեանը Պետերբուրգ է գնացել։ Այդ մասին հեռագրով յայտնել են Պետերբուրգի ոստիկանութեան և աֆերիստը ձերբակալվել է, իսկ մի քանի օր առաջ նա տարվել է Օդեսսայի խուզարկու բաժանմունքը, այնտեղից բանտ։ Ինչպէս հաղորդում են, Տէր-Պետրոսեանը խոստովանել է իր յանցանքը, յայտնելով, որ ինքն է ղեկավարել կազմակերպութեանը, բայց ինքը ոչինչ չէ արել, այլ հրամաններ է տուել իր մօտ օգնական Միշիցին։ Խմբի գլխաւոր գործը կայացել է նրանում, որ կազմակերպութեան մասնակցողները համաձայնութիւն կայացնէին պօստային մանր ծառայողների հետ, որպէսզի վերջինները հետևէին ապահոված նամակներին և նրանցում եղած ապրանքագրերը (ուղարկված ապրանքը ստանալու իրաւունք տուող թղթերը) գողանային տային իրանց, և այդպիսով նրանք ստանում էին շատ ապրանքներ։ Աֆերիստ Տէր-Պետրոսեանը հետաքրքրական անձնաւորութիւն է։ Նա հայ հասարակութեան մէջ յայտնի մարդու որդի է։ Նա սովորել է հոգևոր ճեմարանում։ Նրա եղբայրը յայտնի երդ.-հաւատարմատար է։ Տէր-Պետրոսեանը պսակված է եղել բարձր աստիճան անձի աղջկայ հետ։ Բայց կնոջ մեռնելուց յետոյ նա զբաղվում է մի ինչ-որ կնոջով։ Այդ բանը միջոցներ է պահանջում և Տէր-Պետրոսեանը կատարում է առաջին աֆերան (40,000 ր.)։ Մինչ՝ այդ այն կինը փախչում է մի օֆիցէրի հետ արտասահման, իսկ Տէր-Պետրոսեանը ձերբակալվում է և բանտարկվում 5 տարով։ Պատիժը կրելուց յետոյ Տէր-Պետրոսեանը մտնում է աֆերիստների խմբի մէջ և սկսում է իր «գործը» պօստային թղթակցութիւնների վրա։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Պետերբուրգ, 26 մարտի

Նախագահում է Րոդզեանկօն։

Հերթական գործերի թւումն է օրէնսդրական առաջարկութիւն՝ Արխանգէլի նահանգում զեմստվային ինքնավարութիւն մտցնելու մասին։

Լէնայի հանքերի բանւորների վերաբերութեամբ պաշտօնական անձանց ցոյց տուած անկանոն գործողութիւնների մասին ներկայացված հարցապնդման առիթով, մէկիկ-մէկիկ սօց.-դեմօկրատների, առաջադիմականների, աշխատաւորականների բանաձևերը մերժելուց յետոյ, ընդունվում է 166 ձայնով ընդդէմ 64-ի զեմստվային հոկտեմբերեանների բանաձևը։

«Ուշադրութեան առնելով, որ սենատոր Մանուխինի քննութիւնը և յետոյ մինիստրների խորհուրդը այն եզրակացութեան յանգեցին, որ աշխատանքի ու ապրուստի ծանր պայմանները, որոնց մէջ գտնվում էին Լէնայի ընկերութեան բանւորները, ստեղծում են պատրաստի հող բանւորական անկարգութիւնների առաջացման համար, որ վերջինների հիմնական պատճառը այդպիսով գտնվում է տնտեսականի մէջ, և ընդունելով՝

1) որ կառավարութիւնը իր ժամանակին ձեռք չառաւ բաւականին վճռական միջոցներ բանւորների կենցաղը բարելաւելու և նրանց յարաբերութիւնները Լէնայի ընկերութեան հետ կանոնաւորելու և

2) որ իր բացատրութիւնների մէջ ներքին գործերի մինիստրի օգնականը, կասկածի ենթարկելով քննիչ սենատորի յարուցած քրէական գործը ընդդէմ ռոտմիստր Տրեշչենկօյի և արդարացնելով վերջինիս, հենց դրանով ջանաց նախօրօշել դատական դատավճիռը և պարզօրէն մատնանշում էր թէ ներքին գործերի մինիստրութիւնը առաջվայ նման շարունակում է անտես անել հասարակական կարծիքը ու առ ոչինչ համարել ազգաբնակութեան լայն մասսաների շահերը,—

Դուման գտնում է, որ առևտրի մինիստրի բացատրութիւններով չէ վերանում իրան ենթակայ մինիստրութեան հասցէին ուղղված ակնարկը, որ մինիստրութիւնը ձեռք չառաւ ամեն միջոցներ վերջ դնելու 1912 թ. ապրիլի 4-ի դէպքերին, իսկ ներքին գործերի մինիստրի օգնականի բացատրութիւնները գտնում է անբաւարար, ու անցնում է հերթական գործերին»։

Այնուհետև քուէարկութեամբ ընդունվում է այն հարցապնդումը, որ ուղղված է ներքին գործերի մինիստրին Մինսկի նահանգապետի մասին, որ կարգադրել էր արգելել լեհ ժողովրդին ազատօրէն օգտվելու իր մայրենի լեզուով։

Վերջում զեկուցանվում է այն հարցապնդումը, որ խօսում է մի քանի բանտերում, որոնց թւում նաև Քութայիսի բանտում, բանտարկեալներին մի շարք նեղութիւնների ու ճնշումների մէջ պահելու մասին։

Հետևեալ նիստը վաղն է։ (Հ. Գ.)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Ի պատասխանի Րօմանովեան ծննդաբերական ապաստարանի բացման առիթով փոխարքային ուղարկած հեռագրի, քաղաքագլխի պաշտօնակատար իշխ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկ փոխարքայից ստացել է հետևեալ հեռագիրը. «Սրտանց շնորհակալ եմ ձեզանից և ապաստարանի բացմանը ներկայ եղողներից սիրալիր հեռագրի և բարի ցանկութիւնների համար։ Կոմս Վօրօնցօվ-Դաշկով»։

◆ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուղարկել է մի կոնդակ, որով յայտնելով նախկին Նպաստամատոյց Յանձնաժողովի ուղարկած 93,000 րուբլու ստացումը, օրհնում է Յանձնաժողովի հանգուցեալ անդամների յիշատակը և շնորհակալութիւն է յայտնում կենդանի անդամներին, կցելով, որ այդ գումարը կը մնայ իբրև անձեռնմխելի և նրա տոկոսիքը կը գործադրվի ամեն տարի դպրոցների պահպանութեան այն գիւղերում, որոնք վնասված են հայ-թուրքական ընդհարումներից, իսկ եթէ որևէ ժողովրդական աղէտ պատահի, այդ տոկոսիքը կը գործադրվի աղէտից վնասվածներին օգնելու։

◆ Վաղը, մարտի 29-ին, եր. ժ. 8-ին, Կայս. Երաժշտ. ընկ. դահլիճում (Գրիբոյեդովսկի փող. սեփ. տ.)՝ տեղի կունենայ Նորակազմ Հայոց Պատմական և Հնագիտական Ընկ. հանդիսաւոր բացումը նախագահ Մեսրոպ եպ.-ի ձեռամբ. ապա յաջորդաբար կը

---

*) Տես «Մշակ» № 66։

խօսեն Ընկ. անդամները հետեւեալ նիւթերի մասին՝ Ստ. Մալխասեան՝ «ընդհանուր ակնարկ հայ պատմագրութեան վրա», Ստ. Լիսիցեան՝ «հայերէն ձեռագրերը», Գ. ա. ք. Աղանեան՝ «Հայկական դիւանները», Ա. Շահնազարեան՝ «Արձանագրութիւնները իբր պատմութեան աղբիւր», Սմբ. Տէր-Աւետիքեան՝ «Հնագիտութեան և դրամագիտութեան նշանակութիւնը»։ Մուտքը առանձին հրաւէրով։

◆ Այսօր երեկոյեան, Արքունական թատրոնում կայանալու է Հայկական երկրորդ Երգիծաբանական Երեկոյթը։ Երգիծաբանական Երեկոյթի կազմողները իրանց նպատակ են դրել կազմակերպել մայրաքաղաքներում յայտնի «Кривое Зеркало»-ի և «Летучая Мышь»-ի ծրագրով՝ իւմօրի և երգիծանքի ենթարկվող հասարակական արժէք ունեցող երեւոյթները, և սկսել են հայկական թատրոնից, նրա րեպերտուարից, բեմադրութիւնից և այլն։ Բացի այդ, Երգիծաբանական Երեկոյթում կենդանի և սրամիտ արձագանք են գտնելու «օրվայ չարիք» դարձած հարցերը։ Այսօրվայ երեկոյթը բնականաբար ճոխացված է նոր նիւթերով, որոնց մէջ ընդմիջումներին «Կաղ Գև» անունով երգիծաբանական, պատկերազարդ թերթի հրատարակութիւնը բռնում է աչքի ընկնող տեղ։ Երեկոյթի զուտ եկամուտի որոշ մասը, ինչպէս մեզ հաղորդում են, յատկացված է «Գիւղասնունդ» ֆօնդին։ Յուսով ենք, որ հայ հասարակութիւնը իր այցելութեամբ կը նպաստի երեկոյթի արտաքին աջողութեանը։

◆ Նովօչերկասկից Թիֆլիս է եկել Բ. Ս. Ռադզոյսկի, պօլիտեխնիկումի յատակագծերի համար քննութեանը մասնակցելու։ Երէկ նրա մասնակցութեամբ կայացաւ պօլիտեխնիկումը կառուցող կօմիտէտի տեխնիկական յանձնաժողովի նիստը, որին ներկայ էին և պօլիտեխնիկումի յատակագծի նախագծերը կազմող ճարտարապետները։

◆ Այսօր, ամսիս 28-ին, երկրագործութեան դեպարտամենտի Կովկասի գլխաւոր լիազօրի դիւանատանը կը կայանայ ռուսական պտղաբուծական ընկ. Անդրկովկասի ճիւղի նիստը։ Զբաղմունքի առարկաններն են ընթացիկ հարցերը և նոր անդամների ընտրութիւնը։ Ֆ. Ի. Կուշկէ ռեֆերատ կը կարդայ՝ աշնանը ծառերը ջրելու ֆիզիօլօգիական նշանակութեան մասին։ Զ. Ի. Խաչատրեան կը խօսի Ալէքսանդրօպօլի գաւառ այգեբուծութեան մասին։

◆ Փոխարքայի առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Լ. Գ. Ենանզուլեան, որ պաշտօնական գործերով ուղարկված էր Պետերբուրգ, վերադարձել է։

◆ Դեռ 1906—1907 թ. թ. չերամապահութիւնը Կովկասում շատ ընկած էր, այժմ այնքան է զարգացել, որ երկրագործութեան դեպարտամենտը անհրաժեշտ է գտել ընդարձակել Թիֆլիսի կովկասեան չերամապահական կայարանի գործունէութիւնը, բացելով նորանոր ճիւղեր։ Մինչև այժմ կայարանը մի ճիւղ ունէր միայն՝ Նուխում. իսկ հիմա բացվում են երկու հատ ևս, մէկը Քութայիսում, իսկ միւսը Սղնախի գաւառի Իլյարիօնովկա գիւղում։ Բացի այդ՝ առաջիկայ տարում բացվելու են դարձեալ երեք ճիւղ՝ Շուշու ռայօնի Աղդամ գիւղում, Բագուի ռայօնի Քիւրդամիր կամ Գէօկչա գիւղում, իսկ երրորդը Հիւսիսային Կովկասում, ինչպէս ենթադրում են, Ստաւրօպօլում։

◆ Կիրակի օրը՝ մարտի 30-ին, փոխարքայի պալատում, Վրաստանի էկզարխ արքեպիսկոպոս Ալէքսէյը աստուածաբանական դասախօսութիւն կը կարդայ «Յիսուսի յարութիւնը» թեմայով։ Դասախօսութեան մուտքից գոյացած գումարը յատկացնելու է քաղաքիս աղքատներին։ Տոմսակները կը ծախվեն 1—3 րուբլով։ Վաճառման տեղի մասին կը յայտարարվի առանձին։

◆ Թերէքի շրջանի կառավարիչ գեն.-լէյտենանտ Ս. Ն. Ֆլէյշեր ժամանեց Թիֆլիս։

◆ Այսօր, երեկոյեան ժամը 8-ին, Հասարակական ակումբում, ուսուցիչ և գրող Է. Սուլթանօվ ռուսերէն լեզուով մի ռեֆերատ կը կարդայ Անդրկովկասի Թուրքերի ժամանակակից գրականութեան մասին։ Ռեֆերատից յետոյ կը լինի զրոյց և երաժշտական բաժին։

◆ Հասարակական ակումբի ծնողական սեկցիան այսօր կազմակերպում է մանկական երեկոյթ, որին կարող են ներկայ լինել բացի ակումբի անդամների երեխաներից և ուրիշները։ Երեկոյթը ղեկավարում են Տ. Կ. Մարգարեան և Վ. Մ. Ալդադանով։

◆ Քաղ. վարչութիւնը որոշել է քաղ. լօմբարդը փոխադրել Մելիք-Ազարեանի նոր շէնքը, որը գտնվում է Օլգինսկի փողոցի վրա։ Շէնքը վարձված է 3000 ռ. տարեկան։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Р. Знамя» հաղորդում է, որ պրեմիէր Գորեմիկինը հիասթափվել է՝ թէ հնարաւոր է միացեալ աշխատանք չորրորդ Դումայի հետ. «Բարձր խաւերում «Р. З.»-ի ասելով, յամառ կերպով խօսում են Դումայի արձակման մասին։ Սակայն արձակումը ժամանակաւորապէս յետաձգված է»։

◆ Ցարիցինում անդամահատեցին Բազլօժեւկա անունով մի կնոջ, որ մեռել էր աբօրտից։ Պարզվեց, որ մահը առաջացել նրանից, որ աբօրտը կատարած բժիշկը մոռացմամբ թողել էր աբօրտի ժամանակ անհրաժեշտ գործիքներից մի քանիսը կնոջ մարմնի մէջ։

◆ «Рѣчь»-ի ասելով, Պետական Խորհրդի նախագահ Ակիմօվը այս օրերս այցելեց կոմս Վիտտէին և նրա հետ երկար խորհրդակցեց։

◆ «Рѣчь»-ի ասելով, Պետերբուրգում կազմակերպվել է ռուս-թիւրքական մերձեցման ընկերութիւն ռուսական ու թիւրքական կուլտուրայի հետ փոխադարձ ծանօթութեան համար։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 26 մարտի

Թոյլ տուէք ձեր թերթի միջոցով բողոքել այն վայրենի վարմունքի դէմ, որը թոյլ տուեց մանկավարժ-ուսուցիչ Ստեփան Սմբատեանը իմ երեխայի վերաբերմամբ։

Կիրակի, ամսիս 23-ին, Թիֆլիսի ժողովարանում կայացած մանկական ցերեկոյթին Ստեփան Սմբատեանը տարել էր իր դպրոցի աշակերտներին, որոնց թւումն էին և իմ երկու երեխաները։

Տեսնելով որ երեխաներս ուշանում են, անմիջապէս շտապեցի ժողովարան հետս թեթև նախաճաշ վերցնելով երեխաներիս համար։ Հէնց մտայ ներս, տեսայ, որ ցերեկոյթը արդէն վերջացել էր և երեխաները իջնում են սանդուխներով։ Փոքրիկս (հինգ տարեկան) տեսնելով ինձ ուրախացած կանչեց՝ «մայրիկ»։ Մանկավարժ Սմբատեանը չը գիտեմ ինչու, գտնելով որ երեխաս մեծ մեղք գործեց ինձ մայրիկ կանչելով, յետ դառաւ և երեխայիս կրծքին խփեց, այդ հարուածից երեխաս ընկաւ աստիճանների վրա. երբ երեխաս ոտի կանգնեց և նորից կանչեց «մայրիկ», այս անգամ արդէն լացի և աղերսական ձայնով, պ. Սմբատեանը նորից երեխայիս կրծքին զարկեց, և երեխաս նորից վայր ընկաւ աստիճանների վրա։

Ես, նրա մայրը, այլևս չը կարողանալով տանել այդ վայրենութիւնը, մօտեցայ պ. Սմբատեանին, ցածր ձայնով, միայն իրան լսելի, ասացի, թէ ինչու է երեխայիս խփում։ Նա դարձաւ դէպի ինձ և բարձրաձայն, ամենաանկիրթ կերպով, գոռաց ինձ վրա։ «Դուք ով էք, դուք ինչ իրաւունք ունէք ինձ նկատողութիւն անելու»... և այլն։

Չուզելով ենթարկվել նրա կոպիտ յարձակումներին, անմիջապէս վերցրի նրա ձեռքից երեխաներիս, անուանելով նրան գռեհիկ, կոշկակար և ոչ մանկավարժ և շտապեցի տուն։ Ահա այս եղելութեան մասին թոյլ տուէք հրապարակով բողոքելու։

Տիկ. Վ. Ալիխանեան

—

Երեւան, 10 մարտի

Լռեց Երեւանի թեմ. դպրոցի հոգաբարձութիւնը։ Լռեց, քանի որ ասելիք չունէր։ Անարդարութիւնն ակներև է ու գոչուն։ «Արհամարհական լռութիւն կամ անակնկալ վէճ,—սա հոգաբարձութեան «ղեկավար կենտրոնի» սովորական գործելակերպն է տարիներ շարունակ, երբ ծանր յանցանքների և անարդար կարգադրութիւնների դէմ արդար բողոքի շանթեր են թափվել։ Այդ «կենտրոնը» և նախագահ առաջնորդը երևի հրճվում են, որ ոչ մի իշխանութիւն չի համարձակւում հարց զարթեցնել և իրանց արարքները քննել։ Ինքն՝ այդ «կենտրոնը»՝ երևի շատ լաւ է զգում, որ իմ դէմ «պատրաստված» որ սուտն էլ բարձրացնի, իրան է հարուածելու, ուստի բարեհաճում է լռել... արհամարհել...

Ուրեմն թող դարձեալ խօսեմ... Եւ ես վաղուց կը խօսէի, եթէ մի կողմից ինձնից առաջ անողոք բնութիւնը չը խօսէր խիստ ծանր հարուածով՝ իբրև հետևանք այս տարի կրած զրկանքի՝ և մինչև օրս չը կաշկանդէր իմ ուշն ու ուրուշը, իսկ միւս կողմից՝ դպրոցի շահերը և ներկայ պարագաների նրբութիւնը։

Ես մինչև այսօր դիմում եմ, խնդրում, բողոքում, սպասում, թէ այդ «կենտրոնն» ինչու այս տարի ինձ ընտրեց իբր հարուածի նշանակէտ և ամբողջ ընտանիքս կորստական տանջանքի դատապարտեց՝ դասերս խլելով և ընկերներիս մէջ բաժանելով. որ յանցանքիս համար. ինչու ինձ միամտացրեց, թէ պաշտօնական վճիռ և արձանագրութիւն չէ կազմվել, թէ միայն խօսվել է. ինչու ոչ մի գրութեամբ մինչև օրս չը յայտնեց յանցանքներս, որ ես պաշտպանվէի կամ գոնէ բնակարան չը վարձէի, ուրիշ տեղերի հրաւէրները չը մերժէի և այսքան ժամանակ չը տանջվէի, չը քայքայվէի. ինչու... ինչու...

Հոգաբարձութիւնը լռում է. իսկ «կենտրոնն» արհամարհում է. և ոչ ոք էլ քաջութիւն չունի այդ «կենտրոնի» խաժերին դիպչելու...

— Հապա արդարութիւնը։

Թող մեռնի, յետոյ պաշտպանենք...

Վերջընթեր յոյսս մնում է մամուլի և հասարակութեան հզօր ձայնը, որ ասպարէզ կանչէ իմ դատախազներին....

Եթէ այդ էլ լռեց կամ ուշացաւ, ինչ անեմ...

Չը դիմե՞մ վերջին ատեանին՝ դատարանին։

Թող ուրեմն այնուհետև ոչ ոք ինձ չը մեղադրի, եթէ այսքան համբերութիւնից յետոյ արդարութիւնն այնտեղ որոնեմ, քանի որ հայ իրականութեան դարչ ու գորշ հորիզոնում մեր վարչական իւրաքանչիւր վերին ատեանը կարծես հլու ծառայ է ստորինին, և ամեն սրբութիւն առա թուր ոտնակոխ «կրքի» և քմահաճոյքի ապերասան խաղերին։ Քննեցէք և տեսէք, որ ես և շատերը շատ ենք լռել ու ներել... Սակայն այժմ—բաւական է։

Ուսուցիչ Քուշմանեան

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Թիֆլիս, 22 մարտի

Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է Բագուից Եղիշէ ա.-ք. Գեղամեանից իր հեղինակած «Պատմական քաղուածքներ» գրքից 250 պրակ, որի համար խորհուրդը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

Խորհուրդ

—

Թիֆլիս, 22 մարտի

«Նուէր Մանուկներին» հրատարակչ. ընկ. վարչութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում հանգուցեալ Ն. Զ. Նարիմանեանի ժառանգներին ընկ. օգտին 25 ռ. նուիրաբերելու համար։

Վարչութիւն

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

(«Գորդեան հանգոյցներից» մէկի լուծման առիթով)

—

Անգլիան ապրում է իր կեանքի նշանաւոր մոմենտներից մէկը։

Դրված է հրապարակի վրա «Գորդեան հանգոյցներից» մէկի—ազգային հարցի «անիծեալ» հատուածներից մէկի—լուծման կաթեգորիկ պահանջը։

Իռլանդական ինքնավարութեան հարցը (հօմրուլը)—դա, կարծես, Մերձաւոր Արևելքի հայկական հարցն էր՝ Եւրօպայի ծոցում. արտակարգ ճնշումներ, ապստամբական փորձեր, մասսայական արտագաղթ՝ նմանօրինակ երևոյթներ էին մէկ թէ միւս տեղ, զուցէ միայն այն էական տարբերութեամբ, որ մի տեղ իշխում էր թիւրքական բռնակալութեան անագորոյն լուծը, իսկ միւսը՝ Անգլիան՝ ներկայացնում էր քաղաքացիական լայնարձակ ազատութիւնների դասական հայրենիքը։

Ինքը՝ իռլանդական «նահատակ» հարցի դարաւոր պատմութիւնը ամենաաջող ապացոյցներից մէկն է, զուցէ, այն երևոյթի, թէ ինչպէս անգամ ռամկավար սկզբունքների լայնարձակ իրականացման երկրում «Գորդեան հանգոյցը» մնաց անլուծելի։ Անգլիական ազատ պարլամենտը հետևում էր ճնշումների և հալածանքների գրեթէ նոյն քաղաքականութեան, ինչ բիւրօկրատական կառավարութիւնը մի այլ երկրում՝ այլացեղ տարրերի դէմ։ Մի պետութեան սահմանադրական կազմը դեռ գրաւական չէ վերջին հաշւով, որ այնտեղ լուծվել է ազգային հարցը, բուժվել ազգային խոցը։

Ներկայ ճգնաժամը, կարող ենք ասել, կոչված է ոչ միայն Իռլանդիայի ազգային կեանքի պատմութեան ըղձացած դարագլխի հիմքը դնելու, այլ և առ հասարակ միացեալ Թագաւորութեան քաղաքական ներքին կեանքի դարձակէտը կազմելու։ Դա մի կռիւ չէ բացառապէս հօմրուլի շուրջը և հօմրուլի համար, այլ քաղաքացիական երկու խոշոր «կաթեգորիաների» լիբերալ և պահպանողական հատուածների—տիրական ձգտումների ընդհարման մի չափազանց վճռական մոմենտ։ Իռլանդական դատի յաղթանակի հոգսը չէ միայն, որ այնքան լարված զբաղեցնում է Ասկվիտի լիբերալ կաբինետին, այլ և վիգի (ազատամիտ) կուսակցութեան ամուր տիրապետութեան ձգտումը՝ պահպանողականի դէմ, ինչպէս և ժողովրդական ներկայացուցչութեան (համայնքների պալատի) լիազօր իրաւունքների յաղթութեան սկզբունքը՝ լորդերի կամ վերին պալատի պարագլխ գոյութեան դէմ։

Քաղաքական յարաբերութիւնների զարգացումը Անգլիայում ստացել էր վերջին տասնամեակում այնպիսի մի բնաւորութիւն, որ լիբերալ կուսակցութեան առաջ՝ դեռ Կամպել-Բաններմանի մինիստրութեան օրով՝ ծագել էր մի գերազանցապէս լուրջ պրօբլէմ ծրագրային քաղաքականութեան հողի վրա։ Անգլիական պարլամենտը չէր յենվում այլ ևս երկու նեցուկների՝ վիգի և տօրի կուսակցութիւնների վրա։ Նրա կազմի մէջ առաջացել էր երրորդ անհրաժեշտ մասնիկը՝ յանձինս բանւորական կուսակցութեան և ուժեղացել չորրորդ՝ մինչ այդ արհամարհված՝ մասնիկը, յանձինս իռլանդական ֆրակցիայի։ Լիբերալ կուսակցութիւնը, որին պատկանում էին առաջ բանւորութեան քուէները, այժմ իր հանդէպ ծառացած տեսաւ մի պատկառելի ֆրակցիա՝ իր կորցրած քուէներից գոյացած։ Միւս կողմից ունիօնիստների դէմ մղած քաղաքական կատաղի պայքարը համոզեց նրան, որ չը պիտի կարողանայ ապահով մեծամասնութեամբ տիրապետել համայնքների պալատում առանց իռլանդական ֆրակցիայի աջակցութեան։

Իսկ ինչ է նշանակում այդ փաստը։

Դա նշանակում է, որ անգլիական լիբերալ բուրժուազիան հարկադրված էր՝ իր իսկ սեփական շահերի թելադրանքով, զգալի թեքումների ուղին ընտրել դէպի ձախ՝ սօցիալական և ազգային հարցերի քաղաքականութեան հողի վրա։

Առաջին դէպքում նա պիտի բաւարարութիւն տար քաղաքականապէս հասունացած բանւորութեան կազմակերպված բանակի պահանջներին՝ նրա պարլամենտական աջակցութիւնը ապահովելու համար։ Երկրորդ դէպքում նա ստիպված էր ընդառաջել ճնշված ազգային հատուածի (Իռլանդիայի) ներկայացուցիչների վաղուց հասունացած ինքնավար պահանջներին։

Եւ այդպէս, ունենալով իր հետ երեք ֆրակցիաների (լիբերալ, բանւորական և իռլանդական) վրա կռթնած մի ապահով մեծամասնութիւն, անգլ. լիբերալ մինիստրութիւնը սկսեց իր արշաւանքը պահպանողականների ամրասեպ կոթողների դէմ։ Լորդերի պալատը կորցրեց իր veto-ի իրաւունքը, այսինքն պահպանողականների ապաստանութեան այդ վերջին միջոցը, և քանի գնում այնքան նուազում են նրա առանձնական արտօնութիւնների շրջանակները։ Լիբերալ կաբինէտը անցրեց բանւորական ապահովագրութեան մեծ օրէնքը, որոշելով այդ նպատակի համար այնպիսի մի բիւջէ, որի նմանը չունի եւրօպական ոչ մէկ երկիր։ Իսկ այժմ նոյն լիբերալ կաբինէտը ձեռնարկել է այնքան քաշքշված իռլանդական «հանգոյցը» լուծելու։

Դա մի սխանհմատիկ կռիւ է, որի ընթացքը այնքան սուր բնաւորութիւն ստացաւ, որ զինւորականութիւնն իսկ իր քաղաքական խօսքն արտասանեց, ինչ ասել կուզէ յօգուտ պահպանողականների դիրքաւորութեան, ընդդէմ լիբերալ մինիստրութեան։ Այն հանգամանքը, որ մինիստր-նախագահ Ասկվիտը ճարպիկ քաղաքականութեամբ իր ձեռքն առաւ զինւորական մինիստրութեան ղեկը, ցոյց է տալիս, թէ որպիսի բարդութիւններ էին նախատեսվում արիստօկրատ օֆիցէրների ըմբոստութիւնից։

Ինչպէս ամեն մի երկրում, այնպէս էլ նոյնիսկ ազատ Անգլիայում, սօցիալական ռէակցիայի խստապարանոց ույժերն իրանց վերջին ու գերագոյն ապաւէնը որոնում են զօրքի մէջ։ Բայց ներկայ դէպքում սխալվում են անգլ. պահպանողականները իրանց հաշիւների մէջ։ Իռլանդական ինքնավարութեան վաղուց արդէն հասունացած պրօբլէմն ունի յօգուտ իրան ազգաբնակութեան գերագոյն մեծամասնութեան կամքը, ուստի նրա բարեյաջող լուծումը՝ այս կամ այն յապաղումներով՝ նոյնքան ապահով պիտի համարել, որքան սօցիալական դժուարընթաց հանգոյցի այլ մասնիկների լուծումը՝ քաղաքական կուլի զարգացման յետագայ էտապներում։

B. Intimus

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

—

«Մշակի» ընթերցողները գիտեն, որ Թիւրքահայոց ազգային կենտրոնական վարչութեան քաղաքական ժողովի ընտրութիւնը, որ ազգային ժողովը պէտք է կատարէր մարտի 7-ին, չը կարողացաւ կայանալ, որովհետև առաջարկված կանդիդատներից ոչ ոք մեծամասնութիւն չը ստացաւ։ Այդ առաջ եկաւ այն հանգամանքից, որ ազգային ժողովի մի քանի ֆրակցիաները՝ դաշնակցական, հնչակեան և ազատական կոչված՝ որոշել էին ձեռնպահ մնալ, և քուէարկութեանը մասնակցել էին միայն կենտրոնի խմբակցութեան անդամները։ Այդ հանգամանքը առիթ էր տուել մանաւանդ դաշնակցականներին հրճվել և ենթադրել, թէ կենտրոնի կամ սահմանադիր-ռամկավարների խմբակցութեանը տիրապետող մեծամասնութիւն չէ կազմում ազգային ժողովի մէջ։ Սակայն այդ ենթադրութիւնը սխալ էր։ Կենտրոնի նպատակը եղել է, որ այս անգամ կազմվի միատարր ազգային վարչութիւն և որ մանաւանդ նրա կազմի մէջ չը մտնեն դաշնակցականներ, որոնց ներկայութիւնը վարչութեան մէջ առաջ էր բերել քայքայումն ազգային իշխանութեան և ապիկար գործունէութիւն։

Այժմ, ինչպէս հաղորդում են Կ. Պոլսի թերթերը, մարտի 14-ին ազգային ժողովը կարողացել է կատարել վարչութեան ընտրութիւնը։ Կենտրոնի խմբակցութեան, ազատականների և հնչակեանների միութեամբ և ձեռնպահութեամբ դաշնակցականների, որոնց թիւը ազգային ժողովում 29 է միայն, ազգային ժողովը ընտրել է վարչութեան 14 անդամներ։ Քուէարկող երեսփոխանների թիւը եղել է 74, և ընտրվել են հետևեալները.

	Քուէ
Ալիքսան Թօփալեան	54
Հայկ Անտօնեան	53
Յովսէփ Գազազեան	52
Դօքտ. Գրիգոր Դաւիթեան	52
Գէորգ Կիւրեղեան	52
Գառնիկ Պէզազեան	52
Լևոն Տնտեսեան	52
Մաքսուտ Նարլիքէճեան	51
Արշակ Խախազեան	51
Յակոբ Եսայեան	51
Ներսէս Զաքարեան	51
Արամ Հալաճեան	50
Սմբատ Քեաթիպեան	50
Յովհաննէս Կիւլպէնկեան	50

Որքան կարելի է իմանալ, բոլոր ընտրեալները պատկանում են կենտրոնի և ազատական խմբակցութիւններին կամ սահմանադիր-ռամկավար կուսակցութեան։ Այս վարչութեան վրա բարոյական մեծ պարտականութիւն կայ ցոյց տալ օգտակար և բեղմնաւոր գործունէութիւն և դարմանել այն մեծ սխալներն ու վնասները, որ կատարեց իր նախորդ կուսակցական վարչութիւնը, որ իր պաշտօնը կիրարկում էր ոչ թէ ազգային ընդհանուր շահերի, այլ կուսակցական շահերի տեսակէտով։

—

Կ. Պոլսի հայ թերթերից մէկը («Բանբեր») հաղորդում է, որ Յ. Շահրիկեան և Ե. Ակնունի հրաժարվեցին Դաշնակցութիւն կուսակցութեան անդամութիւնից։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Լօնդօնում ստացված տեղեկութիւնների համաձայն, եպիրոտցիների և ալբանցիների վերջին կռիւներից մինում ալբանները կորցրել են 500 սպանված։

◆ Իտալիայից շարունակ մեծ քանակութեամբ ռազմամթերքներ են ուղարկվում Հարաւային Ալբանիա ապստամբված Եպիրոսի համար։ Լուրերի համաձայն, զէնք ստացվում է նաև Աւստրիայից։ Բացի դրանից, ինչպէս հաղորդում են, Աւստրիան և Իտալիան ուղարկել են և հրահանգիչ օֆիցէրներ։ Պրինց Վիդը զօրք է ժողովում արշաւելու դէպի Եպիրոս։

◆ Բուխարէստի օրինակին հետևելով, գաւառներում ևս տեղի են ունենում հակաաւստրիական ցոյցեր։ Ռումին կառավարութիւնը անզօր է դիմադրելու ժողովրդական բռնկված զգացմունքներին։ Աւստրիան պաշտօնապէս պահանջեց Ռումինիայից վերջ դնել հակաաւստրիական ցոյցերին ամենակարճ ժամանակամիջոցում։

◆ Հաղորդում են, որ Սալար-ուդ-Դովլէն Շվէյցարիայից ուղևորվել է դէպի Պարսկաստան։

◆ Ֆրանսիան դիմեց Ռուսաստանին և Անգլիային մի նոտայով, որով առաջարկում է պետութիւններին ազդել ալբան կառավարութեան վրա, որպէս զի եպիրոտցիներին տրվի լայն կրօնական ու կուլտուրական ազատութիւն։

◆ Անգլիական երկրորդ նաւատորմը ռազմի վարժութիւններ է կատարելու Իռլանդիայի ափերի մօտ։ Վարժութիւնները զուգադիպվում են այն ժամանակին, երբ գերմանական նաւերը այդ ճանապարհով գաղտնի զէնք են մատակարարելու Ուլստէրի համար։

◆ «В. В.»-ին հաղորդում են Վիեննայից, որ կայսրը խիստ մրսել է և Զատիկը անկարող է անցնել Վալդզէէ ամարանոցում։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ գերմանական զինւորական միսսիայի անդամները մինիստրներին հաշիւ ներկայացրին Բօսֆօրի բերդերը ամրացնելու մասին։ Մատնանշված է մանաւանդ, որ անհրաժեշտ է հին թնդանօթները, հին բերդերը վերանորոգել և կառուցանել մի քանի նորերը։

◆ «Веч. Вр.»-ին հեռագրում են Թէհրանից, թէ «Իրանէմրուզ» լրագիրը համակրանքով է խօսում Գերմանիայի այն աջողութիւնների մասին, որոնք վերաբերում են Պարսկաստանում պօստային փաթեթների առաքումը իր ձեռքը ձգելուն, ինչպէս և Ատրպատականում Շէնեմանը գրաւելուն, որ մինչև օրս գտնվում էր ռուսահպատակ կապալառուների ձեռքում։

◆ Թաւրիզի բնակիչները ագիտացիայի ազդեցութեան տակ մի քանի հազար նամակ ուղարկեցին հիւպատոսարաններին, յայտնելով թէ, ատրպատականցիք կամենում են սահմանադրութիւն, բայց Շուջա-ուդ-Դովլէն արգելք է լինում պատգամաւորների առաքմանը։ Նամակների մեծ մասը ուղարկված է գերմանական հիւպատոսին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թէ ինչ են նստել սուֆրաժիստուհիները Անգլիայի վրա.—Այս հարցը մանրամասն մշակել է անգլիական մի լրագիր և եկել է հետևեալ եզրակացութեան, որ սուֆրաժիստուհիների ահաբեկութեան պատճառած վնասները կազմում են 974.555,348, մօտաւորապէս մի միլիարդ մարկ։ Այս հաշւի մէջ մտնում են այն շէնքերի արժէքները, որ քանդել են սուֆրաժիստուհիները։ Իսկ նրանք քանդել կամ վնասել են մի շարք դղեակներ, եկեղեցիներ, հասարակական հիմնարկութիւններ, պատմական յուշարձաններ, հասարակական շէնքեր, երկաթուղագծերի կամուրջներ և այլ կառուցուածքներ։ Այս հաշւի մէջ չեն մտնում, ի հարկէ, ամենօրեայ հրդեհների, կոտրատված ապակիների և այլ մանր բաների վնասները։

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



ԱՆՆԿԱՐԱԳՐԵԼԻ ԱԽՈՐԺ ԶԳԱՑՄՈՒՆՔ Է նկատվում, երբ գլուխը լուացվում է Պիկսաֆոնով, քնքոյշ, հեղուկ ձիւթային սապոնով, որ նշանակված է գլխի լուացումների համար և որը քիմիական պատենտային միջոցով մաքրված է ձիւթային վատ հոտից։ Պիկսաֆոնը ոչ միայն մաքրում է մազերը, այլ և շնորհիւ իր մէջ պարունակվող ձիւթի, ուղղակի գրգռեցուցիչ կերպով ազդում է մազերի արմատի վրա։ Բացի այդ, նա տալիս է հարուստ փրփուր և շատ հեշտութեամբ մաքրվում է մազերի վրայից։

Պիկսաֆոնի մի քանի անգամ լուացվելուց յետոյ ամեն ոք զգում է նրա բարեբար ազդեցութիւնը և համոզվում, որ Պիկսաֆոնը իսկապէս ամենալաւ միջոցն է գլխի կաշին մաքրելու և մազերը ամրացնելու համար։

Պիկսաֆոնի մէկ սրուակը, որ բաւականանում է մի քանի ամիս, արժէ 1 ռ. 50 կոպ.։ Վաճառվում է բոլոր համապատասխան խանութներում։ Ամենալաւ վարսավիրները գլուխների լուացումը կատարում են Պիկսաֆոնով։

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԲՈՒԺԵԼՈՒ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Մեր ժամանակի երկու յայտնի հեղինակութիւններ՝ անգլիացի Հէյգը և ֆրանսիացի Բրօուն-Սէկարը արտասանել են իրանց «Նոր խօսքը» հիւանդութիւնների բուժման մասին։

Պրօֆ. Հէյգը իր փայլուն աշխատասիրութեամբ՝ «Միզային թթուտը որպէս խրօնիքական հիւանդութիւնների հիմնական պատճառ» խորագրով՝ անհերքելի կերպով ապացուցել է, որ բազմաթիւ և զանազան հիւանդութիւնները, որոնց ենթակայ է մարդը, շատ վրա հասնող զառամութիւնը եւ մինչեւ անգամ մահը առաջ են գալիս նրանից, որ օրգանիզմը պարունակում է իր մէջ մեծ քանակութեամբ միզային թթուտ։

Գիտական նորագոյն հետազօտութիւններով ապացուցված է, որ մեր ներկայ ժամանակի կուլտուրական մարդը չափազանց շատ է այնպիսի կերակուր գործ ածում, որ պարունակում է իր մէջ թունաւոր տարրեր (միս, ձուկ, սուրճ, շօկօլադ, կակաօ և այլն)։

Քանի օրգանիզմը ջահել է և առողջ, նա կարողանում է առանձին թթուտների եւ ֆերմենտների օգնութեամբ, որ առաջ են գալիս նրա սերմնային գեղձերից և անցնում արեան մէջ, թթւեցնել թունաւոր պուրինները եւ դուրս վանել նրանց երիկամունքների միջոցով։ Բայց հէնց որ օրգանիզմի ֆունկցիաները թուլանում են, որ նկատելի է հիւանդութիւնների կամ ծերութեան ժամանակ, այդ դէպքում թուլանում է նաեւ սերմնային գեղձերի գործունէութիւնը և նուազում է կամ բոլորովին սպառվում այդ գեղձերից դէպի արեան մէջն անցնող փրկարար թթւուտն ու ֆերմենտը, որի հետեւանքը լինում է այն, որ արեան մէջ առատանում են պուրինները, որոնցից և առաջանում է միզային թթուտը։

Միւս գիտնականը՝ պրօֆ. Բրօուն Սէկարը՝ իր աշխատասիրութիւններով և բազմաթիւ դիտողութիւններով թէ իր վրա և թէ իր հիւանդների վրա՝ ոչ պակաս փայլուն կերպով ապացուցել է, որ «կենդանիների սերմնային գեղձերից հանված հիւթը պարունակում է իր մէջ հէնց այն թթւուտներն ու ֆերմենտները, որոնք բացակայում են ծերերի, հիւանդների և թուլակազմների արեան միջից, և որ այդ հիւթը, մուտք գործելով արեան մէջ, արագացնում է նիւթերի փոխանակութիւնը, հալեցնում և ոչնչացնում է պուրիններն ու միզային թթւուտը, այսինքն՝ անհետացնում է խրօնիքական հիւանդութիւնների պատճառները և օրգանիզմը դնում է վերածնութեան խակական շաւղի վրա»։

Այժմ միայն յայտնի է բժիշկների շրջանում եղած այն աջողութիւնը, որ ունի «կենդանիների սերմնային գեղձերից պատրաստված հիւթը—Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօրատօրիայից։ Արդէն 3000-ից աւելի բժիշկներ նշանակում են Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօրատօրիայում պատրաստված սերմնային հիւթը այնպիսի հիւանդութիւնների ժամանակ, որ առաջանում են օրգանիզմի մէջ պուրինները և միզային թթւուտը կուտակվելուց, այն է՝ նէվրաստէնիայի, իստէրիայի, նէվրալգիայի, էպիլէպսիայի, սեռական թուլութեան, զառամութեան, արեան պակասութեան, հիւծւածութեան եւ բէլի, կաթուածի, պօդագրայի եւ յօդացաւի, շաքարահիւանդութեան, դիաբէտի, տաբէռկուլօզի, բրօնխիտի, արտէրիօսկլէրօզի եւ զգրութեան, գլխացաւի եւ անքնութեան, ողնուղեղի հիւծման, մարսողութեան եւ սրտի գործունէութեան անկանոնութեան, տիֆից, քոլէրից, դիֆտերիտից, սիֆիլիսից, ծննդաբերութիւնից, անդամահատութիւնից առաջացած թուլութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ։

Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօրատօրիայի սերմնային հիւթի բուժիչ նշանակութիւնը, բժիշկների կարծիքով, ԽՈՇՈՐ է, որ երեւում է հետեւեալ դիտողութիւններից։

Պ. Պ. ԲԺԻՇԿՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ներքին հիւանդ. կաֆէդրայի պատկառելի պրօֆես. Ա. Մ. ՇԻՒՑՕՎԻ դիտողութիւնը։ Խարկով, Գօգօլի փող. № 6.

«Չափազանց շնորհակալ եմ Ձեզանից Ձեր հիանալի պրէպարատի (սերմնային հիւթ՝ Դ. Կալէնիչէնկօյի լաբօր.) ինձ ուղարկելուն համար։ Թէ ես և թէ իմ եղբօր-որդին լաւ հետեւանքներ ունեցանք։ Մէկ և կէս ամսվայ ընթացքում իմ մկանային ոյժերս ըստ դինամէտրի աւելացան մինչև 4 կիլօ (տարիքս 76 է), տրամադրութիւնս ակնյայտ փոխվեց դէպի լաւը, ախորժակս բաւականին աւելացաւ։ Մի ամսից յետոյ, եղբօր-որդուս հազը և խռխռը դադարեց, ոյժերը բաւականին աւելացան։ Այն հիւանդները, որոնց խորհուրդ էի տուել Ձեր պրէպարատը գործածել, շատ գոհ մնացին։ Ես իմ կնոջը բժշկում էի Սպէրմին-Պէլով, սակայն հետեւանքները բացասական եղան»։

2) Բժշկապետ Կ. ՇՉԵԿԻՆԻ (Խարկովի նահանգ. սախարենա) դիտողութիւնը։ «Ես ունէի ստամոքսի կատարր և 4—5 օր շարունակվող կապութիւն։ Բժշկական ոչ մի միջոց ինձ չօգնեց. բայց հէնց որ սկսեցի ընդունել սերմնային գեղձերից պատրաստված հիւթը, մինչև երկու շաբաթը կանոնաւորվեց իմ ստամոքսը, և այժմ ամեն օր կատարում եմ իմ բնական պահանջը։ Երբ ես ժամանեցի Եալտա, իմ մարմնի կշիռը 3 պուդ 20 ֆունտ էր. իսկ այժմ՝ 3 պ. $28^{3}/_{4}$ ֆ. է։ Կլիմայական՝ ոչ մի պայման առաջին երկու ամսում ինձ ոչինչ չօգնեց, այլ, ընդհակառակն, ես աւելի թոյլ էի զգում ինձ և նեղսրտում էի. բայց հէնց որ սկսեցի խմել ձեր դեղը, երեք շաբաթից յետոյ ես ինձ 60 տարով ջահել էի զգում (ինքս 60 տարեկան եմ)»։

3) Բժշկ. Ա. Մ. ԿՇԱՆՕՎՍԿԻԻ դիտողութիւնը։ Կաժդանի գիւղ, Նօվօվոլէյսկի գաւառ, Վիլն. նահանգ։

ա) «Մի 47 տ. հիւանդ, թոքախտաւոր, գտնվում էր մահվան ճիրաններում։ Երկրորդ սրուակ դեղը ընդունելուց յետոյ հիւանդը բոլորովին վերակենդանացաւ, թոքերի թարախային պալարները սպիներով ծածկվեցին, և քննելիս՝ սարսափելի հիւանդութեան ախտանշանները այլևս չէին նկատվում։ Թէ ես և թէ իմ պաշտօնակիցները հիացած ենք ձեր դեղի փայլուն հետեւանքներից»։

բ) «Մի պառաւ կալուածատիրուհի, որ հիւանդ էր յօդացաւով և ջրգողութեամբ, այդ դեղից երկու սրուակ ընդունելուց յետոյ՝ կարողանում է երկարատև զբօսնել։ Ուռոյցքները չքացել են, նոյնպէս և՝ բոլոր յօդային ցաւերը։ Իրան 20 տարով ջահելացած է զգում»։

գ) «Մի քահանայ, 52 տարեկան, որ հալումաշ էր եղել մայասիլից, մի սրուակ ընդունելուց յետոյ առողջացաւ։ Ամեն ինչ փորձել էր, սակայն անօգուտ. իսկ 3 շաբաթվայ ընթացքում, այն էլ մի սրուակ ընդունելով, մարդը վերականգնեց իր առողջութիւնը»։

«Ես գնում եմ Բերլին և Պարիզ, ուր Բժշկ. Ընկ. մէջ պիտի զեկուցում կարդամ իմ փորձերի մասին՝ Դ. Կալէնիչէնկօյի սերմնային գեղձերից պատրաստված հիւթի վերաբերմամբ»։

4) Բժ. Կ. ԲԵՆՏԿՕՎՍԿԻԻ դիտողութիւնը. Պօլտավա։

«Ինքս ընդունելով Դ. Կալէնիչէնկօյի «սերմնային հիւթը» օրական 2 անգամ, 30 կաթիլից, նկատեցի իմ մէջ ակնյայտ փոփոխութիւն դէպի լաւը։ Ման գալ կարողանում եմ երեք անգամ աւելի, քան առաջ էր։ Առաջները իմ փորձած սպէրմինը այդ աջողութիւնը երբեք չունեցաւ։ Իրաւ որ սերմնային հիւթը արագացնում է մարդու օրգանիզմի մէջ գտնված միզային աղերի նուազումը, որը ես նկատել եմ իմ մէջը անալիզի ենթարկելով»։

5) Բժ. Պ. Ա. ԱՆՏԻՊՕՎԻ դիտողութիւնը։ Դէդովիչի կայար., Մ.-Վ.-Ր. երկաթուղի։

«Մի վարժուհի, 28 տար. (Ս. Պ.), ունեցել էր թոքերի բորբոքում, մի տարուց յետոյ՝ տիֆ, որից յետոյ տեղի էր ունեցել ուժեղ անէմիա և թուլակազմութիւն։ Հիւանդը ամբողջ երկու ամիս պառկած էր անկողնում, և ոչ մի դեղ չէր օգնում նրան։ Մէկ խորանարդ միլ. արեան մէջ ես խոշորացոյցով գտայ 3.700,000 կարմիր գնդակներ։ Իսկոյն ես գրեցի նրան դեղատոմս՝ գործածելու սերմնային գեղձերից քամված հիւթ, և չորս սրուակ ընդունելուց յետոյ հիւանդի անէմիան սկսեց արագօրէն անհետանալ։ Վեց սրուակից յետոյ ես հաշւեցի նրա արեան կարմիր գնդակները և գտայ 6.300,000 հատ։ Հիւանդի ոյժերը այնքան վերականգնվեցին, որ նա կարող է այժմ պարապել երեխաների հետ։ Ուշադրութեամբ քննելով և ուսումնասիրելով պրէպարատը, ես կարող եմ համարձակ ասել, որ դա ամենալաւ և ուժեղ դեղ է շատ հիւանդութիւնների դէմ»։

6) Նօվգօրօդի զինւոր. հիւանդ. աւագբժիշկ ՏԱԼԻՉԻՆԻ դիտողութիւնը։

«Մօտ 70 տարեկան մի պառաւ կին հիւանդ էր ամբողջ երկու տարի խրօնիքական յօդացաւով։ Երկարատեւ հիւանդութիւնը և զառամութիւնը հիւանդին կատարեալ կմախք էին դարձրել։ Հիւանդը մի տարուց աւելի պառկած էր անկողնի մէջ։ Չորս ամիս անցնելուց յետոյ, երբ հեղուկ-դեղի ամբողջ պաշարը նա ընդունեց, հիւանդը կարողացաւ ոտքի կանգնել և ազատ ման գալ սենեակում»։

7) Վարշավայի մանկ. հիւանդ. աւագբժիշկ Ա. ԴՕԲՐԺԱՆՍԿԻԻ դիտողութիւնը։

«Գ. Դ., ոսկրացաւով բռնված մի ծերունի, որի ձեռքերի մատները վերջերս սկսել էին սաստիկ ցաւեր զգալ, Ձեր դեղից երկու սրուակ ընդունելուց յետոյ՝ ցաւերը նուազեցին և ոտները սկսեցին ազատ շարժումներ անել։ Բայց գլխաւորն այն է, որ մեզի մէջ եղած միզային թթւուտը, որի վերջին անալիզը ցոյց էր տուել հազարին (pro mille) 4,27, գտնվում էր հալված դրութեան մէջ, այնպէս որ խոշորացոյցով քննելիս հազիւ մի քանի բիւրեղիկներ էին նկատվում։

8) Բժ. Վ. ՄԱՏՈՒՍԵՎԻՉԻ (Լուբնա) դիտողութիւնը։

«Մի հիւանդ, 26 տար., նեղ կրծքով, թուլակազմ, որ մի քանի անգամ արիւն էր թքել, ախորժակը վատ, թախծոտ, իր հիւանդութեան (թոքախտ) վատ հետեւանքները նախազգացող, բժշկվում էր ինձ մօտ։ Ես նշանակեցի նրան ընդունել Դ. Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայում պատրաստված սերմնային գեղձերից քամված հիւթից։ Հիւանդի ախորժակը բացվեց, անհանգստութիւնը օրէ-ցօր լաւացաւ։ Մինչև երկու շաբաթը երիտասարդը աշխատել սկսեց։ Մինչև երկու ամիսը նրա մարմնի կշիռը 21 ֆունտով աւելացաւ։ Հազը դադարեց։ Կարող եմ համարձակ անել այս եզրակացութիւնը, որ «սերմնային հիւթը վերականգնում է օրգանիզմի ոյժերը կռւելու վարակական հիւանդութիւնների դէմ, և այդպիսով՝ այս և այն հիւանդութիւնից երերված առողջութիւնը նորից վերականգնվում է»։

Հիւանդների անձնական դիտողութիւններ

9) Պ. Իվանով, ծովային տէխնիկ-[illegible], գնդապետ (Մոսկվա, Մեծ-Եակիմանկա)։

«Մարմնիս ձախ կողմից ես կաթուած էի ստացել։ Ոչ ոքի չէի ճանաչում և գիտակցութիւնս կորցրել էի։ Իմ պաշտօնակիցներիս թախանձանքը՝ վերյիշել աշխարհիս շուրջը եղած նաւագնացութիւնը Թագաժառանգ Ցեսարեվիչի—այժմ բարեպաշտ Թագաւորող Կայսեր—հետ, ես անկարող էի լինում կատարել։ Ամեն ինչ ինձ համար կորած էր։ Ես սկսեցի ընդունել սերմնային գեղձերից քամված հիւթ։ Եւ այժմ, շնորհիւ Աստուծոյ ողորմութեան, ես ինձ այնպէս առոյգ, կատարելապէս առողջ և ուժեղ եմ զգում, որ բոլոր իմ ծանօթները չեն կարողանում որոշել, թէ մարմինս որ մասն էր կաթուածի ենթարկված։ Ինձ, իսկապէս ասած, վերադարձել է երկրորդ երիտասարդութիւնը»։

10) Քահանայ Սլաստենով Ա. Վաս. (Մալայա-Կնեազեվկա, Ատկար. գաւ., Սարատովի նահ., «Բ. Կօպէնի» կայարան)։

«Իմ փեսայ՝ Ա. Ս. քահանան սաստիկ հիւանդ էր. շարունակ սաստիկ քրտնելուց՝ ամեն օր 3 շապիկ էր փոխում։ Նա այնքան էր թուլացել, որ գլուխը բարձրացնել չէր կարողանում։ Սերմնային գեղձերից քամված հիւթից մի սրուակ ընդունելուց յետոյ հիւանդը իր մէջ սկսեց ոյժ զգալ, ախորժակը բացվեց, սկսեց հանգիստ քնել և շուտով բոլորովին ապաքինվեց։ Այժմ նա իրան այնպէս լաւ է զգում, որ սրանից 10 տարի առաջ էլ այդպէս չէր զգում»։

11) Քահանայ Դ. Րօզով (Պետրօվսկ, Ֆիլիպպովօ-Գօրիայինօվսկի գիւղ)։

«Մի քանի տարի շարունակ ես ունէի մայասիլ հիւանդութիւնը։ Օգոստոս ամսից սկսած ընդունեցի սերմնային գեղձերից քամված հիւթը. այդ օրվանից սկսած արիւնհոսութիւնս դադարեց, կապութիւնս անցաւ և բնական պահանջս կատարվում է կանոնաւոր։ Քունս, ախորժակս և ինքնազգացումս շատ լաւ է»։

12) Տիրացու Ի. Ա. Նարբէկօվ (Կօստրօմա, գիմնազիային սօստ, Վօզնեսենսկի գիւղ)։

«Ես անցեալ ամառ ընդունեցի սերմնային գեղձերից պատրաստված հիւթից 2 սրուակ՝ մարմնիս ձախ կողմում ստացված կաթուածիս դէմ։ Ես ինձ այնքան լաւ եմ զգում, որ կարողացայ 4 անգամ գնալ ոտով մինչև Կօստրօմա, 25 վերստ տարածութիւն, և վերադառնալ։

13) Բէլեակօվ Միխ. (Աչին, Պերմի նահ.)։

«Ես հիւանդ էի, ման գալ չէի կարողանում, ցաւում էր թէ կուրծքս և թէ մէջքս։ Երկու ոտս թուլացել էին, այնպէս որ առանց կողմնակի օգնութեան չէի կարողանում անկողնի մէջ շուռ գալ։ Երբ սերմնային հիւթից մի սրուակ խմեցի, ես անկողնից վեր կացայ, և ի զարմանս բոլորի՝ սկսեցի ման գալ, և այժմ զգում եմ, որ ոյժերս վերականգնել են»։

14) Նաւ. Ալ. Կվաշուկ (Ջերվօննօէ կայարան, Վօլ. նահ.)։

«Ես ձեռների յօդացաւ ունէի, նոյնիսկ չէի կարողանում ծծկեր երեխայիս ձեռներիս վրա պահել, այնպէս որ ազախինս ստիպված էր լինում երեխային գօտիով կապել կրծքիս, որպէսզի կարողանայի կերակրել նրան։ Սերմնային հիւթից երեք սրուակ ընդունելուց յետոյ ես բուժվեցի և մինչև անգամ զգում էի ամբողջ օրգանիզմիս մէջ բարելաւումն»։

15) Ալէքսանդրա Սմիրնովա (Տուլա, Կրիվօյա-Բելեայեւսկայա փող., տ. Բօրիսօվի)։

«Չորս տարի սրանից առաջ ես իմ 7 տարեկան երեխային բժշկեցի սերմնային հիւթով։ Նա սարսափելի բրօնխիտ ունէր։ Երեխան մինչև այն դրութեան հասաւ, որ ման գալ չէր կարողանում, համարեա թէ խեղդվում էր, նեղսրտում, գունատվում և ոչինչ ուտել չէր կարողանում։ Բժիշկներն ասում էին, որ նա ժամանակով թոքախտ պիտի ստանայ։ Ես սկսեցի երեխայիս տալ սերմնային հիւթ, օրական 3 անգամ՝ 7 կաթիլ, իւրաքանչիւր անգամը։ Նա դրանից յետոյ սկսեց ուտել, շտապով կազդուրվել, թողեց հազալը, ծանչոց բոլորովին չունէր և սկսեց գիրանալ։ Նա մինչև օրս էլ այնպէս գէր է, սովորում է դպրոցում և աւելի առողջ է քան իր միւս եղբայրները»։

Մնում է ցանկալ, որ բազմաթիւ բժիշկներ և հիւանդներ, որոնք նուազ չափով անգամ կասկածում են Կալէնիչէնկօյի լաբօրատօրիայում պատրաստված «սերմնային հիւթի» բուժարար ազդեցութեան վերաբերմամբ, անձամբ փորձէին այդ պրէպարատը։

Պ. պ. բժիշկներին «Սերմնային հիւթը», Դ. Կալէնիչէնկօյի լաբօր. պատրաստված, դիտողութեան համար ուղարկվում է GRATIS.

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ

Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօր. պատրաստված սերմնային հիւթով բուժումներին վերաբերեալ ընդարձակ գրականութիւնը (մօտ 400 բժիշկների դիտողութիւններ)։

Դ. ԿԱԼԵՆԻՉԵՆԿՕՅԻ լաբօր. ՍԵՐՄՆԱՅԻՆ ՀԻՒԹԻ մի սրուակը արժէ 2 ր. 50 կ.։ Ճանապարհածախքը (կարելի է և վերադիրով.)—40 կ.։ Մի սրուակից աւել պատուիրողները ճանապարհածախքը չեն վճարում։

Հասցէն՝ Органотерапевтическая лабораторія Д. Калениченко, Москва, Козловскій пер., соб. д., № 10, кв. 267.

(ապ. 16) (M. 121181) 3—1

I ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏԵՂԷՆԻ
Նիկօլայեվսկի կամուրջ, 20—30

Սրանով յայտարարում եմ Թիֆլիսի յարգելի հասարակութեան, որ ստացված է տղամարդկանց, կանանց եւ երեխաների բազմազան հագուստեղէն, ամենավերջին տարազի։

Որպէս զի հետեւեալ սեզօնին չը մնայ խանութի ապրանքը, մենք նշանակել ենք
ԽՈՇՈՐ ԷԺԱՆ ՎԱՃԱՌՔ 60% ԶԵՂՋՈՎ

Խանութում գտնվող բոլոր ապրանքների գները նշանակված են կապոյտ մատիտով և ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ։ Էժան վաճառքի ժամանակ գնված ապրանքները չեն վերադարձվում։

Մնում եմ յարգանքներով Փիրմայի կառավարիչ՝ Ա. ՂԱԴԱԿՉԻԵԱՆ

(ու. կ. չ.) 255. 10—4

ՊԱՏՐԱՍՏ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
Մուրխաբեանի
ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ
(Սօցիալ-տնտեսական էտիւդ)

Բովանդակութիւն

I Նախաբան հեղինակի։ Կանանց ազատագրութեան հարցը և նրա հակառակորդները. Տօլստօյ, Նիցշէ, Շօպէնհաուէր, Վէյնինգեր։ Եզրափակումն։

II Կանանց հարցը իբրև սօցիալական բարդ երևոյթ։ Նրա ուսումնասիրութիւնը հասարակական-տնտեսական տեսակէտից։ Հասարակութիւն և միջավայրի ազդեցութիւնը։

III Կանանց հարցի նկատմամբ տիրող կարծիքը մեզանում։ Հարցի պատմական անցեալը։ Նախապատմական ընդհանուր դրութիւն և բաժանումն շրջանների։ Կինը նախապատմական և պատմական անցեալում ըստ Մօրգանի, Էնգէլսի, Բախօֆէնի, Բեբէլի։ Կնոջ դրութիւնը ըստ Աստուածաշնչի, քրիստոնէական վարդապետութեան, Թեօկրատիայի, Մխիթար Գօշի դատաստանագրքի և ռուսաց «Տնարարի»։ Փակագծի մէջ. պաշտօնական եկեղեցին և կինը և հայկական կրօնական ոսկեդարը։ Քրիստոնէական բէգինները։

IV Միջին դարեր։ Տնտեսական ընդհանուր դրութիւն։ Jus primae noctis (առաջին գիշերվայ իրաւունքը)։ Վերածնութիւն։ Անհատի ազատագրումը սխօլաստիկայից։ Կինը գրականութեան և արուեստի մէջ։ Շեկսպիր և Լիւտեր։ Թոմաս Մօրուս։

V Հին կարգերը։ Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը։ Կանանց կօլլեկտիվ մասնակցութիւնը այդ յեղաշրջման մէջ։ Հետեւանքները։

VI Կինը ներկայ պայմաններում։ Ամուսնութիւն։ Անառակութիւն և մայրականութիւն։ Կինը ընտանեկան, հասարակական և պետական կեանքում։ Կնոջ մասնակցութիւնը տնտեսական կեանքում։

VII Տնտեսական յեղաշրջումն։ Նոր հասարակութիւնը։ Զարգացման նոր շրջան։ Գիտութիւնն ու գեղարուեստը նոր հասարակութեան մէջ։ Ապագայի հեռանկարը։

VIII Մալթուզեան սարսափը մարդկութեան գերաճման առջև։ Առաջատուութիւնների (պրօգրէսսիաների) ողբերգական ձևակերպութիւնը այդ գերաճման և ապրելու միջոցների նուազման նկատմամբ։ Քիմիական սինթէզ և տեխնիկայի կատարելութիւն։ Մարդկային ցեղի աճման հաւանական ապագան։

IX Կինը որպէս սեռ։ Կնոջ ֆիզիօլօգիան և մտաւոր կարողութիւնը։ Տաղանդ և հանճար։ Կնոջ իմաստն ու էութիւնը։ Ապագան։

(ու.չ.) 250. 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Նախկին օրդինատոր Պետերբուրգի սիֆիլ.-վեներ. կլինիկայի։ Ընդունում է հիւանդներին յատկապէս միզասեռային, վեներ., սիֆիլիսային հիւանդութեան- առաւ. ժամը 10—11 և երեկ. ժ. 6—8. Սեմեոնօվսկայա փող., № 18 (Վօրոնցովի արձանի մօտ) առանձնապէս հիւանդների համար յարմարեցված բնակարանում։ Բժշկի բնակարան Սեմեոնօվսկայա, № 16.

(չ.ու.կ.) 804. 100—71

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

ՓՈԽԱԴՐՎԵՑ նոր բնակարան Սօլօլակում, Բէբուտօվսկայա փող. № 38.

Ներքին և երեխաների հիւանդ., մասնագէտ ստամոքսային և աղիքային հիւանդ.։ Էլէկտրօտէրապիա։ Ընդունելութիւնը առ. ժամը 10—11-ը և երեկ. ժամը 5—7-ը։
Տէլէֆօն № 388.

(ա. օ.) 112. 100—35



Փականագործ-Մեխանիկ.
ԱՐՀԵՍՏԱՆՈՑ
ԶԱՅՐՎՈՂ
ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ
ՎԵՐՆԵՐ ՊՖԵՅԼ
Վօկզալնայա փ. № 3.
(օ.մ.) 100. 100—20

ԱԶԳ

Կը փափագէի ունենալ մի հայ կօմպանիօն, որ ունենայ 10-էն մինչև 20,000 ր., մի ֆաբրիկական արտադրութեան համար, որ ամբողջ Ռուսիոյ մէջ կօնկուրանս չունի։ Ես ունիմ հոս յարաբերութիւն այս արտադրութեան համար կայսերական ֆաբրիկներու հետ։ Արտասահմանի մէջ մեծ սպառում կայ այս արտադրութիւնից։ 100-էն 50—75 զուտ շահ կարելի է սպասել։ Աւելի ընդարձակ տեղեկութեան համար գրել հետեւեալ հասցէին. Одесса, Средно-Фонтанская № 8, кв. 10. С. Н. Н.

(Ե. ու.) 280. 3—2

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱԾԱԽՍԻ ԳՆԵՐՈՎ

ՄԵԾԱԾԱԽՍ ՊԱՀԵՍՏ
ՄՈԴԱՅԻՆ-ԳԱԼԱՆՏԵՐԵԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ
ՓՈՒՂԻՆՕՎ, ԱԼԻԽԱՆՕՎ ԵՒ ԿՕ
ԱՐՄԵԱՆՍԿԻ ԲԱԶԱՐ, ՏՈՒՆ № 11.
●●●●●● ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ●●●●●●
մեծ քանակութեամբ ընտիր
●●● ՀՈՎԱՆՈՑՆԵՐ ●●●
և տղամարդկանց ու կանանց սպիտակեղէն։
Ամեն օր ստացվում են սէզօնային մօդային ապրանքներ —ինչպէս ռուսական, նոյնպէս արտասահմանեան։
(կ.ու.) 241. 5—4

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱԾԱԽՍԻ ԳՆԵՐՈՎ

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱԾԱԽՍԻ ԳՆԵՐՈՎ

ՀԱՏԱՎԱՃԱՌԸ ՄԵԾԱԾԱԽՍԻ ԳՆԵՐՈՎ

ԻՆԺԵՆԵՐ
Ի. Ս. ՊՕՆԴՕՅԵՎ

— ԹԻՖԼԻՍ —
Նիկօլայեվսկայա, 164, անկիւն Բակինսկայա փ.
— Տէլէֆօն զրասենեակի № 123. —

ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԿԱԹՍԱՅԻ ԵՐԿԱԹ
ԱՆԿԻՒՆԱՅԻՆ ԵՐԿԱԹ
ՏԱՆԻՔԻ ԵՐԿԱԹ
(սեւ եւ ցինկով պատած)

ՑԷՄԷՆՏ, ասֆալտ, գուդրօն, կրակի դիմացող աղիւս եւ կաւ, մեխեր, ամեն չափի եւ այլ նիւթեր շինութ. համար։

Շինութիւնների համար աղիւս՝ Վակէում գործվող աղիւսի սեփական գործարանից։

(14,28) 34. 32—6

ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆԵԱՆԻ
հետեւեալ աշխատութիւնները՝

1) «ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ» (էջ 6000, 25 հատոր) գինը 50 ր., հատորը 2 ր.։
2) «ՍԱՍՄԱՅ ԾՌԵՐԻ ՑՈՒՇԻԿՆԵՐ» (500 էջ) գինը 2 ր.։
3) «ԳՐՈՂԻ ՎԻՃԱԿԸ» (պօէմա) գինը 1 ր.։
4) ԾՕՃԿԱՆՑԻ ԽՈՒԴԻ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։
5) «ԳԻՒՂԻ ՀԵՐՈՍԸ» «Տարազից» (պատմ. պօէմ) գինը 1 ր.։

Հեղինակի հասցէն՝ Эривань, Астафьевская № 42, магазинъ Михаила Антонянцъ, переслать сел. Башкендъ, старш. учителю Григорію Баласанянъ. (օ.մ.) 271. 10—2

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный